

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Գերմանիայի Բունդեսթագը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը



212, Հունիս 2016 թ. No 212, June 2016 شماره ۲۱۲ تیر ماه ۱۳۹۵

Այս համարում

Հայերեն բաժին

1- Խմբագրական.....	0
2- Հայաստանի Հանրապետություն.....	1
3- Արևմտյան Հայաստան.....	14
4- Միություն.....	16
5- Միջազգային.....	17
6- Մշակութային.....	19
7- Մայրենի լեզու.....	19
8- Աբաղան.....	20

Պարսկերեն բաժին

Արցախի պատմություն.....	1-5
Վարդավառ.....	6

Շապիկի առաջին էջում՝ Գերմանիան ճանաչեց Հայոց ցեղասպանությունը

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 212, Հունիս 2016 No. 212, June 2016

ماهنامه لويس - شماره ۲۱۲ تیر ماه ۱۳۹۵

ԼՈՒՅՍ

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան

Թամ Ղարախանյան, Սաթենիկ Ավետիսյան

Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան

Փոստարկ 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

ماهنامه لويس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com:

نشانی اینترنت: www.louysonline.com:

Գերմանիայի Բունդեսթագը

ճանաչեց

Հայոց ցեղասպանությունը



Գերմանիայի Բունդեսթագն, հունիսի 2-ին, ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձեռը: Դեմ է քվեարկել միայն մեկ պատգամավոր, եւս մեկը ձեռնպահ է մնացել : 101 տարի առաջ Օսմանյան կայսրությունում հայերի ու մյուս քրիստոնյաների ցեղասպանության հիշատակին անվանումով բանաձեռը ներկայացրել էր իշխող խորհրդարանական մեծամասնությունը՝ Անգելա Մերկելի ԲԴՄ/ ԲՍՄ ու Գերմանիայի Սոցիալ դեմոկրատական կուսակցության կուսակցական դաշինքը, նաեւ Կանաչների կուսակցությունը:

Բանաձեռում նաեւ նշվում է, որ Գերմանիայի կառավարությունը ճանաչում է պատասխանատվության իր մասնաբաժինը այդ պատմական իրադարձությունների համար, նաեւ 1915-ի ողբերգական իրադարձությունները՝ հայերի տեղահանություններն ու սպանությունները .ցեղասպանությունն է կոչում: Ավելի վաղ Անգելա Մերկելն իր մամուլի քարտուղարի միջոցով հայտնել էր, որ ինքը համամիտ է իր կուսակցության հետ, բայց չի մասնակցի քվեարկությանը:

Հայաստանի Հանրապետություն

**Ֆրանսիայի Ազգային ժողովը միաձայն
ընդունել է Հայոց ցեղասպանության ժխտումը
քրեականացնող օրինագիծը**



Ֆրանսիայի Ազգային ժողովը միաձայն կողմ է քվեարկել Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող նախագծին, որը Խորհրդարանի քննարկմանն էր ներկայացրել Ֆրանսիայի կառավարությունը: 21 ներկա պատգամավորները բոլորն էլ կողմ են եղել նախագծին: Այդ մասին Փարիզից տեղեկացնում է Հայկական համաշխարհային բիզնես համախմբման նախագահ, Ֆրանսիայում Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի ներկայացուցիչ Վարդան Գաբրիելյանը, նշելով, որ սեպտեմբերին այդ նախագիծը կքննարկվի Սենատում և հաստատվելուց հետո կրկին կգնա Ազգային ժողով՝ վերահաստատման համար:

**Գերմանիայի Բունդեսթագում ընդունված
Հայոց ցեղասպանության վերաբերյալ
բանաձևի ամբողջական տեքստը**



Ներկայացնում ենք Գերմանիայի Բունդեսթագում ընդունված Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևի տեքստը:

101 տարի առաջ Օսմանյան կայսրությունում հայերի ու մյուս քրիստոնյաների ցեղասպանության (Völkermord) հիշատակին.

Բունդեսթագը սահմանում է.

Բունդեսթագը խոնարհվում է 101 տարի առաջ Օսմանյան կայսրությունում հարկադիր տեղահանության եւ ջարդերի ենթարկված հայերի եւ մյուս քրիստոնյա փոքրամասնությունների առջև:

Խորհրդարանը դատապարտում է երիտթուրքական կառավարության արարքը, որը հանգեցրեց Օսմանյան Կայսրությունում հայերի գրեթե ամբողջական բնաջնջմանը: Բացի այդ, ջարդերին զոհ գնացին այլ քրիստոնյա փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ ասորիներ, խալդեր:

Երիտթուրքական կառավարության հրամանով 1915-ի ապրիլի 24-ին օսմանյան Կոստանդնուպոլսում սկսվեցին ավելի քան 1 մլն հայերի պլանավորված աքսորն ու ջարդերը: Նրանց ճակատագիրը զանգվածային բնաջնջումների, էթնիկ զտումների, վտարումների եւ, այո, ցեղասպանությունների (Völkermord) օրինակ է, որոնցով այդպես սարսափելիորեն նշանավորվեց 20-րդ դարը: Դրա հետ մեկտեղ մենք գիտակցում ենք Հոլոքոստի առանձնահատկությունը, որի համար Գերմանիան իր մեղքն ու պատասխանատվությունն է կրում:

Բունդեսթագը ցավում է Գերմանական ռեյխի անփառունակ դերի համար՝ որպես Օսմանյան կայսրության դաշնակից, որը, չնայած գերմանացի քաղաքական գործիչների եւ միսիոներների միանշանակ տեղեկություններին, ոչինչ չձեռնարկեց մարդկության դեմ այդ հանցագործությունը կանգնեցնելու համար: Բունդեսթագում հիշատակումը նաեւ առանձնահատուկ հարգանքի դրսևորում է աշխարհի ամենահին քրիստոնյա ազգի նկատմամբ:

Բունդեսթագն ընդունում է Գերմանիայի պատմական պատասխանատվությունը:

Բունդեսթագը հարգում է ոչ միայն անասելի դաժան հանցագործությանը զոհ գնացած նահատակներին, այլ նաեւ նրանց, որոնք, ավելի քան 100 տարի առաջ ծանր իրավիճակում ընդդիմանալով իրենց կառավարությանը, փրկել են հայ կանանց, երեխաներին եւ տղամարդկանց:

Բունդեսթագը կոչ է անում դաշնային կառավարությանը ուշադրություն հատկացնել 1915-ին հայերի ջարդերի եւ տեղահանությունների հիշատակմանը:

Բունդեսթագը իր որոշումն ամրապնդում է 2005-ի Drs. 15/5689 որոշմամբ, որը նվիրված էր զոհերի հիշատակմանն ու թուրքերի եւ հայերի պատմության առերեսմանը: Դրա նպատակն է նպաստել հայ եւ թուրք ժողովուրդների հաշտեցմանը: 2015-ի ապրիլի 24-ին հիշատակման 100-ամյակի կապակցությամբ բոլոր բանախոսները դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը: 2015-ի ապրիլի 24-ի նախօրեին Գերմանիայի նախագահը դատապարտեց Հայոց ցեղասպանությունը, հիշատակեց զոհերին ինչպես նաեւ հաշտեցման կոչ արեց: Գերմանական կայսրությունը իր մասնակի պատասխանատվությունն է կրում այդ իրադարձությունների համար:

Բունդեսթագը ընդունում է Գերմանիայի առանձնահատուկ պատմական պատասխանատվությունը: Այդ թվում նա պետք է նաեւ հայերին ու թուրքերին աջակցի հաշտեցման գործընթացում:

Այսօր Գերմանիայի դպրոցական, համալսարանական եւ քաղաքական կրթության առջեւ պարտականություն է ծառանում՝ ուսումնական ծրագրերում եւ նյութերում ընդգրկել հայերի տեղահանման եւ բնաջնջման պատմությունը որպես 20-րդ դարի էթնիկ բախումների պատմության մաս՝ ավանդելով այն գալիք սերունդներին: Այդ հարցում կարելի էր դեր ունեն կատարելու հատկապես ԳԴՀ-ի երկրամասերը:

Գերմանիայի Բունդեսթագն համարում է, որ տեղահանումների եւ կոտորածների գոհ դարձած հայերի ոգեկոչումը՝ հաշվի առնելով Գերմանիայի դերը եւ նկատի ունենալով նյութի ներկայացումը հայկական ու թուրքական ծագում ունեցող համաքաղաքացիներին, նպաստում է նաեւ նրանց համախմբմանն ու համատեղ խաղաղ համակեցությանը:

Գերմանիայի Բունդեսթագը որոշումում է նաեւ Թուրքիայի գիտական, հասարակական, արվեստի ու մշակույթի բնագավառներում այն նախաձեռնությունների եւ ներդրումների անը, որոնք ուղղված են հայերի նկատմամբ իրագործված հանցագործության քննությանն ու թուրքերի եւ հայերի միջեւ հաշտեցմանը:

Գերմանիայի Բունդեսթագը շարունակում է խրախուսել ԳԴՀ կառավարությանը՝ 1915թ. հայերի դեմ իրագործված տեղահանումների եւ կոտորածների գոհների ոգեկոչմանն ու վերախմաստավորմանն ուշադրություն հատկացնելու գործում: Գերմանիայի Բունդեսթագը որոշումում է նաեւ հարցի արծարծմանն ու օժանդակությանն ուղղված յուրաքանչյուր նախաձեռնություն:

Գերմանիայի սեփական պատմական փորձը ցույց է տալիս, թե որքան դժվար է յուրաքանչյուր հասարակության համար՝ անդրադառնալ իր պատմության մութ էջերին: Այսուհանդերձ պատմության անաչառ հետազոտումը թերեւս հաշտության ամենակարելի հիմքն է հանդիսանում ինչպես տվյալ հասարակության ներսում, այնպես էլ նրա ուրիշների հետ ունեցած հարաբերությունների մեջ: Ընդ որում այստեղ պետք է տարբերել ոճրագործների կողմից գործված մեղքը եւ այսօր ապրող մարդկանց կրած պատասխանատվությունը:

Բացի այդ անցյալի ոգեկոչումը նախագրուշացնում է մեզ արթուն մնալ եւ խոչընդոտել յուրաքանչյուր քայլի, որ վերստին կարող է սպառնալ մարդկանց ու ժողովուրդներին:

Գերմանիայի Բունդեսթագը տեղակ է Հայաստանի եւ Թուրքիայի կողմից 2005 թվականից ի վեր նախաձեռնվող մերձեցման փորձերից եւ կոչ է անում թե ոգեկոչման եւ թե միջպետական հարաբերությունների կարգավորման հարցերում քայլեր կատարել: Այդուհանդերձ երկու պետությունների միջեւ հարաբերությունները շարունակում են մնալ լարված՝ կրելով փոխադարձ անվստահության կնիքը: Գերմանիան պետք է օժանդակի հայերին եւ թուրքերին մերձեցման գործընթացում: Իհարկե կենսական նշանակություն ունի պատմության հետ առերեսումը, վերախմաստավորումը, որը փոխըմբռնման հիմք է կարող է հանդիսանալ թե՛ ներկայի եւ թե՛ ապագայի համար:

Թուրքիայի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ հարաբերությունների լիցքաթափումն ու կարգավորումը կարելի է նաեւ կովկասյան տարածաշրջանի կայունացման համար: Գերմանիան ԵՄ հարեւանության քաղաքականության շրջանակներում պատասխանատու է զգում իրեն հայ-

թուրքական հարաբերություններում կատարած պատմական դերի առումով:

Այսպիսով՝ Գերմանիայի Բունդեսթագը Դաշնային կառավարությանը կոչ է անում

- 2015-ի ապրիլի 24-ին խորհրդարանում 100-ամյակի կապակցությամբ տեղի ունեցած քննարկումների ոգուն համահունչ շարունակել հետագա հանրային լայն քննարկումները 1915-1916թթ. հայերի զանգվածային տեղահանումների եւ բնաջնջման, ինչպես նաեւ այդ գործում Գերմանական ռեյխի ունեցած պատասխանատվության շուրջ:

- Թուրքական կողմին խթանել առերեսվել ժամանակին կատարած ջարդերի եւ տեղահանումների հետ եւ դրանով դնել հայկական կողմի հետ անհրաժեշտ հաշտեցման հիմքը:

- Շարունակել նպաստել հայերի ու թուրքերի հաշտեցմանը, որը պետք է տեղի ունենա անցյալի վերանայման, մերձեցման եւ պատմական մեղքի ներողության միջոցով:

- Շարունակել գիտական, քաղաքացիական եւ մշակութային միջոցառումները Թուրքիայում եւ Հայաստանում:

- Վերագնահատել պատմական դեպքերը, որոնց միջոցով Հայաստանն ու Թուրքիան առաջին քայլը կկատարեն դեպի հաշտեցում եւ աջակել վաղուց հասունացած հայ-թուրքական կարգավորմանը:

- Թուրքիայի եւ Հայաստանի կառավարություններին խրախուսել շարունակել այս պահին լճացած միջպետական հարաբերությունների կարգավորման գործընթացը:

- Զանքեր գործադրել 2009-ի ցյուրիխյան արձանագրությունները հայկական եւ թուրքական կողմից վավերացնելու համար, որոնք նախատեսում են գիտնականների հանձնաժողով ստեղծել, վերականգնել դիվանագիտական հարաբերությունները եւ բացել սահմանները:

- Աջակցել, որպեսզի Թուրքիայի Հանրապետությունում սկսված հայկական հուշարձանների պահպանման գործընթացը շարունակվի եւ ինտենսիվանա:

- Ֆինանսական հնարավորությունների շրջանակներում շարունակել Գերմանիայում գիտական, մշակութային եւ քաղաքացիական հասարակության ոլորտում նախագծերի եւ նախաձեռնությունների աջակցությունը, որոնք վերաբերում են 1915-1916թթ. Իրադարձություններին»:

Հիմնավորում

Օսմանյան կայսրությունում Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի բնաջնջումը հազարամյակների պատմություն ունեցող հայ ժողովրդի համար մեծագույն եւ ծանրագույն հետեւանքներ ունեցող աղետ էր: Անկախ աղբյուրների հաշվարկներով տեղահանումներին եւ զանգվածային ջարդերին գոհ գնացին միլիոնից ավել հայեր: Բազմաթիվ անկախ պատմաբաններ, խորհրդարաններ եւ միջազգային կազմակերպություններ հայերի տեղահանումներն ու բնաջնջումը որակում են որպես ցեղասպանություն: Ինչպես կրոնը եւ լեզուն, այնպես էլ բռնագաղթերի եւ կոտորածների հիշողությունը կարելի էր նշանակություն ունի այս ժողովրդի ինքնության համար:

Գերմանիայի Բունդեսթագը հիշում է այս իրադարձությունները՝ նաեւ Առաջին համաշխարհային պատերազմի մասին հիշողության համատեքստում: Գերմանական կայսրությունը Օսմանյան կայսրության

գլխավոր ռազմական դաշնակիցն էր: Տեղյակ լինելով հայերի հետապնդումների եւ սպանությունների մասին, Գերմանական կայսրության այն ժամանակվա կառավարությունը այնուամենայնիվ ոչինչ չձեռնարկեց: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը պատասխանատվություն է կրում այս հանցագործության հետ առերեսման եւ դրա մասին հիշողությունը արթուն պահելու համար օժանդակություն ցուցաբերելու գործում: Չնայած փաստերի առկայությանը, Թուրքիան մինչ օրս ժխտում է, որ հայերի տեղահանությունը, հետապնդումը եւ կոտորածը նախապես ծրագրված են եղել եւ որ տարհանման ճանապարհին տեղի ունեցած զանգվածային ջարդերն օսմանյան կառավարության կողմից կանխամտածված են եղել:

Ընդհանուր առմամբ ջարդերի եւ տեղահանումների ծավալը Թուրքիայում դեռեւս կասկածի տակ է դրվում: Այնուամենայնիվ կան նաեւ հակառակ միտումներ: 2008թ. թուրք-հայկական մերձեցման հուսադրող առիթ կար, երբ երկու երկրների նախագահները ներկա գտնվեցին Թուրքիայի եւ Հայաստանի ազգային հավաքականների միջեւ ֆուտբոլային խաղին՝ ի ցույց դնելով իրենց կամքը հետագա բանակցություններ վարելու հարցում: 2009թ. երկու երկրների արտաքին գործերի նախարարները ստորագրեցին հայ-թուրքական արձանագրություն, որը, ի թիվս այլոց, նախատեսում էր ստեղծել պատմությունը գիտականորեն ուսումնասիրող հանձնաժողով: Սակայն մինչ օրս այդ արձանագրությունը չի վավերացվել երկու երկրների խորհրդարանների կողմից:

Երկու ժողովուրդների միջեւ հաշտեցման մասին կարելի է մտածել միայն այն դեպքում, եթե 100 տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունները հիմնավորապես պարզաբանվեն եւ փաստերն այլեւս չժխտվեն: Դրա համար անհրաժեշտ է, որ հայերի տեղահանման եւ սպանությունների պատմության հետ առերեսվելիս պատմաբանները եւ լրագրողները Թուրքիայում կարողանան ազատ գործել՝ չվախենալով քաղաքական հետապնդումներից: Բնաջնջման թեմայի հետ առնչվող բազմաթիվ նախաձեռնություններ կան արդեն Թուրքիայում: Տարիներ շարունակ այս թեման թուրքական հասարակության իրարամերժ քննարկման առարկա է դարձել: Այս զարգացումները ողջունելի են այնքանով, որքանով ողջունելի են քաղաքացիական հասարակությունների այն անդրսահմանային նախագծերը, որոնք տարիներ շարունակ ֆինանսական աջակցություն են ստանում ԳԴՀ արտաքին գործերի նախարարության կողմից:

Գերմանական կայսրությունը, որպես Օսմանյան կայսրության գլխավոր ռազմական դաշնակից, նույնպես խորապես ներգրավված էր այդ իրադարձություններում: Գերմանական կայսրության ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական ղեկավարությունները ի սկզբանե տեղեկացված էին հայերի հետապնդումների եւ սպանությունների մասին: Երբ ավետարանչական եկեղեցու աստվածաբան դր. Յոհաննես Լեփսիուսը 1915թ. հոկտեմբերի 5-ին Գերմանիայի Ռայխսթագում ներկայացրեց 1915թ. հուլիս/օգոստոս ամիսներին Կոստանդնուպոլսում իր կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, գերմանական կայսրության ղեկավարությունն այդ թեման ամբողջությամբ ենթարկեց գրաքննության: Իր Թուրքիայում հայ ժողովրդի

վիճակի մասին զեկույցրե, Լեփսիուսն անմիջականորեն ուղարկել էր նաեւ Ռայխսթագի պատգամավորներին, որը սակայն 1916թ. գերմանական ռազմական գրաքննության կողմից նույնպես արգելվել եւ բռնագրավվել էր: Եվ միայն Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո 1919թ. այն փոխանցվեց պատգամավորներին: Չնայած գիտության եւ քաղաքականության ոլորտի ներկայացուցիչների, ինչպես նաեւ եկեղեցականների եւ գերմանացի բազմաթիվ անհատների անհապաղ խնդրագրերին՝ այդ թվում քաղաքական այնպիսի գործիչների, ինչպիսին են Ֆիլիպ Շնայդեմանը, Կարլ Լիբկնեխտը կամ Մաթիաս Էրցբերգերը, եւ ավետարանչական ու կաթոլիկ եկեղեցիների նշանակալի հեղինակությունների, ինչպիսին են Ադոլֆ ֆոն Հառնակը եւ Լորենց Վերթմանը, գերմանական կայսրությունն իր օսմանյան դաշնակցի վրա որեւէ ճնշում չգործադրեց: Օսմանյան կայսրությունում գերմանացի դեսպանների եւ հյուպատոսների զեկույցների վրա հիմնված Գերմանիայի արտգործնախարարության ակտերը նույնպես հաստատում են կոտորածների եւ տեղահանումների պլանավորված իրականացման փաստը: Դրանք այդ ժամանակ կատարված դեպքերի կարեւորագույն պետական տեղեկատվությունն են : ԳԴՀ ատգործնախարարությունը դեռեւս տարիներ առաջ այդ ակտերը հասանելի էր դարձրել: 1998թ. այդ ակտերի մի ամբողջական փայտեջ միկրոֆիլի տեսքով փոխանցվել է Հայաստանին: Դրանից անմիջապես հետո Թուրքիան նույնպես ստացել է այդ ակտերի մեկ օրինակ:

Գերմանիան ունի իր մեղքի բաժինը. Բունդեսթագի խոսնակ

02.06.2016



Պատմության, անցյալի ազնիվ վերանայումը հաշտեցման եւ մերձեցման ուղի է: Այս մասին, այսօր՝ հունիսի 2-ին Գերմանիայի Բունդեսթագում Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձեռի քննարկման ժամանակ նշել է Գերմանիայի Բունդեսթագի խոսնակ Նորբերթ Լամերթը:

Նրա խոսքով, խորհրդարանը պատմական հանձնաժողով չէ եւ հաստատ դատարան չէ, սակայն Գերմանիայի խորհրդարանը չի ուզում եւ չի կարող անհարմար հարցերը շրջանցել, այդ թվում՝ 101 տարի առաջ Օսմանյան Կայսրությունում հայերի եւ մյուս քրիստոնյաների ցեղասպանությունը:

Այս ամենում իր մեղքի բաժինն ունի նաեւ Գերմանիան: Մենք գիտենք մեր սեփական պատմության մուր Էջերը

մյուսներից շատ, որ պատմությանը առերեսվելը շատ ցավալի կարող է լինել: Սակայն մենք նաև գիտենք, որ անցյալի ազնիվ վերանայումը հաշտեցման եւ մերձեցման ուղի է: Այսօրվա Թուրքիայի կառավարությունը մեղավոր չէ նրանում, ինչ տեղի է ունեցել 100 տարի առաջ, սակայն նա մեղավոր է նրանում, թե դրանից 100 տարի անց ինչ է ստացվել,-ընդգծել է խոսնակը՝ հավելելով, որ այս բանաձևի քննարկմանը նախորդել են սպառնալիքներ ու ցույցեր թուրքերի կողմից Բուլղեսթագի պատգամավորների նկատմամբ:

Մենք ընդունում ենք, իհարկե, ցանկացած քննադատություն, անգամ եթե այն ազդեցիկ է, սակայն Գերմանիայի Բունդեսթագի խոսքի ազատությանը խոչընդոտելն անընդունելի է,-ասաց նա:

Նշենք, որ բանաձևում հստակ օգտագործվում է ցեղասպանություն եզրը: 101 տարի առաջ Օսմանյան կայսրությունում հայերի ու մյուս քրիստոնյաների ցեղասպանության հիշատակին: Այսպես է վերնագրված բանաձևը:

Այս պահին, Բեռլինում Բունդեսթագի շենքի առջև, ընթանում է հայ համայնքի ակցիան, որի մասնակիցների ձեռքին կան Հայաստանի, ինչպես նաև Հունաստանի եւ մի շարք այլ երկրների դրոշներ: Ցուցարարները ճշմարտության շղթան են կազմել՝ հանուն Հայոց ցեղասպանության ճանաչման:

Բունդեսթագի առաջ հայ երիտասարդները երգով ու պարով ողջունեցին ցեղասպանության բանաձևի ընդունումը

15:38, 02.06.2016

Գերմանիայի խորհրդարանի առաջ հայ երիտասարդները, երգով, պարով ու ծափողջուներով ողջունեցին Հայոց ցեղասպանության մասին բանաձևի ընդունումը: Բունդեսթագի շենքի առջև ծածանվում են հայկական, հունական, ասորական եւ քրդական դրոշները:

Մենք բոլորս հայ ենք եւ,- բացականչում են քրդերը:

Հայ երիտասարդները բացականչում են՝ եղբայրություն, արդարություն եւ հայրենասիրական երգեր երգում:



Թուրք ազգը հպարտանում է իր անցյալով. Թուրքիայի վարչապետի արձագանքը Գերմանիային

16:51, 02.06.2016

Թուրքիայի անցյալում որեւէ ամոթալի դեպք տեղի չի ունեցել, որ Թուրքիան դրանից գլուխը կախի: Նման

հայտարարություն է արել Թուրքիայի վարչապետ Բինալի Յիլդըրըմը:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի վարչապետ Բինալի Յիլդըրըմը հաստատել է, որ Գերմանիայում Թուրքիայի դեսպանին կանչել են Անկարա: Գերմանիայի որոշումը սխալ որոշում էր: Թուրք ազգը հպարտանում է իր անցյալով: Թուրքիայի անցյալում որեւէ ամոթալի դեպք տեղի չի ունեցել, որ Թուրքիան դրանից գլուխը կախի: Ավելի կոնկրետ քայլեր կանենք, երբ ընդունված տեքստին ծանոթանանք,-ասել է Թուրքիայի վարչապետը:



Նշենք, որ հունիսի 2-ին Գերմանիայի խորհրդարանն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը, որտեղ նշվում է, որ Բունդեսթագը խոնարհվում է 101 տարի առաջ Օսմանյան կայսրությունում հարկադիր տեղահանության եւ ջարդերի ենթարկված հայերի եւ մյուս քրիստոնյա փոքրամասնությունների առջև: Բանաձևում նաև նշվում է, որ Բունդեսթագը ցավում է, որ Ժամանակին Գերմանիայի կառավարությունը ոչինչ չի ձեռնարկել՝ կանգնեցնելու մարդկության դեմ հանցանքը, որի համար Բունդեսթագն ընդունում է Գերմանիայի պատմական պատասխանատվությունը:

Բունդեսթագի որոշումը լրջորեն ազդելու է թուրք-գերմանական հարաբերությունների վրա. Էրդողան

16:59, 02.06.2016



Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը արագ արձագանքել է Գերմանիայի խորհրդարանի կողմից ընդունված Հայոց ցեղասպանությանը վերաբերող բանաձևին:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ պաշտոնական այցով Քենիայում գտնվող Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը լրագրողների հետ զրույցում նշել է, թե վարչապետ Բինալի Յիլդըրմի հետ խորհրդակցելուց հետո առաջին քայլով հետ են կանչել Բեռլինում Թուրքիայի դեսպանին: Բունդեսթագի որոշումը լրջորեն ազդելու է թուրք-գերմանական հարաբերությունների վրա: Թուրքիա

վերադառնալուց հետո կորոշենք մեր քայլերը, –ասել է Էրդողանը:

Նշենք, որ հունիսի 2-ին Գերմանիայի խորհրդարանն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեռն, որտեղ նշվում է, որ Բուլղերաթագը խոնարհվում է 101 տարի առաջ Օսմանյան կայսրությունում հարկադիր տեղահանության եւ ջարդերի ենթարկված հայերի եւ մյուս քրիստոնյա փոքրամասնությունների առջեւ: Բանաձեռնում նաեւ նշվում է, որ Բուլղերաթագը ցավում է, որ ժամանակին Գերմանիայի կառավարությունը ոչինչ չի ձեռնարկել՝ կանգնեցնելու մարդկության դեմ հանցանքը, որի համար Բուլղերաթագն ընդունում է Գերմանիայի պատմական պատասխանատվությունը:

Ես գերմանացի եմ, որի մայրը ծնվել է Հայաստանում եւ ինձ հայերեն է սովորեցրել. ելույթ Բուլղերաթագում

17:33, 02.06.2016



Ես գերմանացի եմ, որի մայրը ծնվել է Հայաստանում, եւ ես շնորհակալ եմ, որ նա ինձ հայերեն է սովորեցրել: Նա հիմա դահլիճում հետեւում է քննարկմանը: Այս մասին հունիսի 2-ին՝ Բուլղերաթագում Ցեղասպանության մասին բանաձեռնի քննարկումների ժամանակ ասել է իշխող ԲԴՄ/ԲՍՄ խմբակցության պատգամավոր Մարտին Փեթզոլդը:

Ես շատ շնորհակալ եմ, որ այս կարեւոր բարոյական թեմայի հարցում Գերմանիան կկրի իր պատասխանատվության բաժինը եւ միջխմբակցական բանաձեռն կընդունվի: Դա պետք է ցույց տա, թե ինչպես կարող են տարբեր ազգեր գոյակցել իրար հետ: Ես գերմանացի եմ, որի մայրը ծնվել է Հայաստանում, եւ ես մեծացել եմ հայերեն սովորելով եւ այն գիտակցությամբ, որ ցեղասպանությունը ճանաչելը չի ենթադրում մատ թափ տալով խոսել կամ մեղք բարդել որեւէ մեկի վրա, այլ խոսքը հաշտեցման հասնելու մասին է, – ասել է նա:

Իշխող կուսակցության մեկ այլ պատգամավոր Բրիտտոֆ Բերգներն իր հերթին նշեց, որ իրենք ուզում են նկարագրել այն ողբերգության էությունը, որը 100 տարի առաջ Օսմանյան կայսրությունում տեղի է ունեցել եւ նշել գերմանացիների պատասխանատվության բաժինը:

Մենք ցեղասպանություն եզրն օգտագործում ենք քանի որ միայն այդ արտահայտությամբ կարող ենք հստակ սահմանել, թե ինչ էր 100 տարի առաջ կատարվածը: Հայերի ճակատագիրը զանգվածային բնաջնջումների, էթնիկ գտումների, վտարումների եւ այդ ցեղասպանությունների օրինակ է, որոնցով այդպես սարսափելիորեն նշանավորվեց 20-րդ դարը, – իր խոսքը եզրափակեց Բերգները:

Բուլղերաթագը որոշում է կայացրել ոչ թե հանուն Հայաստանի, այլ ավելի շատ ընդդեմ Թուրքիայի. Արամ Մանուկյան

17:47, 02.06.2016



Եվրոպայի երեք մեծ երկրներից երկուսը արդեն ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, ինչը, բնականաբար, կարելի է համարել հաջողություն, իսկ ճանաչելու մոտիվները կարելի է քննարկել, թե ինչու այս պահին: Այս մասին այսօր՝ հունիսի 2-ին, մեզ հետ զրույցում ասաց ԱԺ ՀԱԿ խմբակցության քարտուղար Արամ Մանուկյանը:

Մա իրավիճակային որոշում է կապված էմիգրանտների, կապված Էրդողանի վարած քաղաքականության, ինչպես նաեւ նրա հետ, որ մեկ տարի հետո Գերմանիայում Բուլղերաթագի ընտրություններ են: Որքան էլ մեզ համար այս որոշումը ոգևորիչ է, այնուամենայնիվ, դա դիվանագիտական քայլ է, եւ այստեղ Բուլղերաթագը որոշում է կայացրել ոչ թե հանուն հայերի, այլ ավելի շատ ընդդեմ Թուրքիայի, ընդդեմ այն իրավիճակի, ինչն այսօր լուրջ մարտահրավեր է Գերմանիայի համար, – ասաց Արամ Մանուկյանը:

Ըստ պատգամավորի՝ այս պահին համընկել է Ցեղասպանության ճանաչման շահը Գերմանիայի որոշ կուսակցությունների քաղաքական շահերի հետ:

Դա նորմալ է: Փորձելու են առաջիկա խորհրդարանում ավելի շատ ձայներ հավաքել, ինչը տրամաբանական է եւ քաղաքական խաղի կանոններին համապատասխան, – ասաց Արամ Մանուկյանը նշելով, որ այս պահին Գերմանիայում ապրող մի քանի միլիոն թուրքերի դեմ որոշում կայացնելով՝ շահելու են մի քանի տասնյակ միլիոն գերմանացու քվե:

Ինչ վերաբերում է Հայաստանի իշխանությունների անելիքներին, ընդդիմադիր պատգամավորը շեշտեց որ նրանց թիվ մեկ խնդիրը այս պահին Արցախի, հայ ժողովրդի անվտանգությանը սպառնացող խնդիրները լուծելն է:

Հայաստանի իշխանություններին խնդիրն այսօր Ղարաբաղի, հայ ժողովրդի անվտանգությանը սպառնացող խնդիրները լուծելն է, դոմինանտը սա է: Հայաստանի դիվանագիտության հաղթանակը չէր, բայց հայերը շահել են դրանից, դա մեզ բավարար է, հայոց դատը առաջ է գնում: Արդյունքը դրական է: Աստված տա՝ վնասները ավելի քիչ լինեն, – նշեց պատգամավորը:

Համաշխարհային ՉԼՄ-ները Բունդեսթագում քվեարկության մասին. Գերմանիան ջղայնացրել է Թուրքիային

18:00, 02.06.2016



Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը միազգային առաջատար ՉԼՄ-ների լրահոսում գլխավոր նորությունն է դարձել:

Պարբերականները հիմնականում մատնանշում են այն փաստը, որ Գերմանիան հավանություն է տվել բանաձեռին, չնայած Թուրքիայի կառավարության ակնկալվող հակազդեցությանը: ՉԼՄ-ների գլխագրերում ամենից հաճախ օգտագործվում են Գերմանիան ջղայնացրել է Թուրքիային եւ Թուրքիան կատաղած է ֆրագները:

Այսպես, Ռոյթերզ գործակալությունը հոդված է հրապարակել Գերմանիան Հայոց ցեղասպանության մասին բանաձեռով ջղայնացրել է Թուրքիային վերնագրով՝ նշելով, որ Մերկելն ի վիճակի չի եղել կանգնեցնել փաստաթղթի ընդունումը:

The Financial Times-ն իր հերթին հիշեցնում է, որ ոչ Գերմանիայի կանցլերը, ոչ արտգործնախարարը ներկա չեն եղել քվեարկությանը: Պարբերականը նշում է, որ կանցլերի տեղակալ Չիգմար Գարբիելը հրապարակայնորեն աջակցել է քվեարկությանը, մինչդեռ արտգործնախարար Շտայնմայերը չի արել դա:

Հեղինակավոր The Economist ամսագիրը գրում է, որ Թուրքիան բանաձեռին կատասխանի սովորական ջղային տոնով: Ընդգծվում է, որ քվեարկությունն անբարենպաստ պահի է ընթանում Անգելա Մերկելի համար, որը ԵՄ-ի եւ Թուրքիայի միջեւ միգրանտների վերաբերյալ գործարքի ճարտարապետն է:

The New York Times-ի վերլուծաբանները համարում են, որ Գերմանիային Թուրքիայի օգնությունն է անհրաժեշտ միգրանտների ճգնաժամի լուծման համար, սակայն ինքը՝ Մերկելը ճնշման է ենթարկվել, բայց Գերմանիայի կանցլերը չէր ուզում այնպիսի տեսք ունենալ, իբր կարող է նահանջել կողքից ճնշման հետեւանքով:

Բրիտանական BBC-ն նաեւ հիշեցնում է, որ բանաձեռի տեքստի վերնագրում հիշատակվում է ցեղասպանությունե բառը, ինչպես նաեւ նշվում է, որ Գերմանիան (Օսմանյան կայսրության այն ժամանակվա դաշնակիցը) որոշակի պատասխանատվություն է կրում նրա համար, որ ոչինչ չի արել հայերի սպանությունը կանխելու համար:

Մենք բանի տեղ չենք դնում Բունդեսթագի ընդունած բանաձեռը. Թուրքիայի փոխվարչապետ

18:35, 02.06.2016



Թուրքիայի փոխվարչապետ Նուման Բուրթուլմուշը եւս միացել է Գերմանիայում կայացված որոշման դեմ մյուս թուրք պաշտոնյաների հայտարարություններին:

Մենք բանի տեղ չենք դնում Բունդեսթագում ընդունված որոշումը,–ասել է Նուման Բուրթուլմուշը:

Հիշեցնենք, որ հունիսի 2–ին Գերմանիայի խորհրդարանն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեռը, որտեղ նշվում է, որ Բունդեսթագը խոնարհվում է 101 տարի առաջ Օսմանյան կայսրությունում հարկադիր տեղահանության եւ ջարդերի ենթարկված հայերի եւ մյուս քրիստոնյա փոքրամասնությունների առջեւ: Բանաձեռում նաեւ նշվում է, որ Բունդեսթագը ցավում է, որ ժամանակին Գերմանիայի կառավարությունը ոչինչ չի ձեռնարկել՝ կանգնեցնելու մարդկության դեմ հանցանքը, որի համար Բունդեսթագն ընդունում է Գերմանիայի պատմական պատասխանատվությունը:

Սերժ Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Գերմանիայի նախագահին, կանցլերին եւ Բունդեսթագի նախագահին

20:36, 02.06.2016



Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր շնորհակալական հեռագրեր է հղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Նախագահ Յոախիմ Գաուլկին, Կանցլեր Անգելա Մերկելին եւ Բունդեսթագի նախագահ Նորբերտ Լամերտին՝ Գերմանիայի Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեռն ընդունման կապակցությամբ: ՀՀ Նախագահը խորին շնորհակալություն

Է հայտնել նրանց եւ Գերմանիայի բոլոր այն քաղաքական եւ հասարակական ուժերին, որոնք իրենց վճռական խոսքն ասացին այս հարցում: Նախագահ Սարգսյանը համոզվածություն է հայտնել, որ բանաձեւն իր ուրույն դերը կունենա ցեղասպանությունների ճանաչման եւ կանխարգելման գործում:

Գերմանիայի Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւի ընդունումն իսկապես պատմական քայլ էր. պատմական՝ ոչ միայն Հայաստանի եւ հայ ժողովրդի, Գերմանիայի եւ գերմանացի ժողովրդի, այլեւ ողջ քաղաքակիրթ աշխարհի համար: Այն խորհրդանշում է ժողովրդավարության, համամարդկային արժեքների գերակայությունը եւ ընդգծում Գերմանիայի հետեւողական դերն այդ արժեքների պահպանման գործում: Այն ուղերձ է ամբողջ աշխարհին առ այն, որ մարդկության դեմ գործված նույնիսկ հարյուրամյա վաղեմության հանցագործությունները ոչ միայն չեն մոռացվում, այլեւ դատապարտվում են՝ ճշգրիտ բնորոշմամբ, ասված է ՀՀ Նախագահի խոսքում:

Danke schՓռ. Երեւանում հայ երիտասարդները շնորհակալություն հայտնեցին Գերմանիային Բունդեսթագի բանաձեւի համար

02.06.2016

Մի քանի տասնյակ երիտասարդ այսօր՝ հունիսի 2-ին, հավաքվել են Հայաստանում Գերմանիայի դեսպանատան մոտ շնորհակալություն հայտնելու Գերմանիային՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւ ընդունելու համար: NEWS.am-ի թղթակիցն հաղորդում է, որ ակիցայի մասնակիցներն հայերեն ու գերմաներեն գոռում են .Շնորհակալությունե եւ իրենց հետ բերել են շնորհակալությունե գրությամբ պատառներ եւ եռագույն:

Իմացանք, որ Գերմանիան ընդունել է եւ որոշեցինք հավաքվել եւ մեր շնորհակալությունը հայտնել Գերմանիային եւ գերմանացիներին այդ բանաձեւն ընդունելու համար: 1915թ. եւ հարակից ժամանակաշրջանում Գերմանիան հանդիսանում էր Թուրքիայի դաշնակիցներից մեկը եւ այն փաստը, որ Թուրքիայի այն ժամանակվա դաշնակիցը ընդունում է Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձեւ, պատմական քայլ է, NEWS.am-ի հետ գրույցում ասաց ակցիայի մասնակիցներից Հայկ Բեջանյանը՝ նշելով, որ դա կարող է առիթ հանդիսանալ անցում կատարելու համար հատուցման փուլին:



Նշենք, որ հունիսի 2-ին Գերմանիայի խորհրդարանն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւը, որտեղ նշվում է, որ Բունդեսթագը խոնարհվում է 101 տարի

առաջ Օսմանյան կայսրությունում հարկադիր տեղահանության եւ ջարդերի ենթարկված հայերի եւ մյուս քրիստոնյա փոքրամասնությունների առջեւ: Բանաձեւում նաեւ նշվում է, որ Բունդեսթագը ցավում է, որ ժամանակին Գերմանիայի կառավարությունը ոչինչ չի ձեռնարկել՝ կանգնեցնելու մարդկության դեմ հանցանքը, որի համար Բունդեսթագն ընդունում է Գերմանիայի պատմական պատասխանատվությունը:

Հայաստանն ու Իրանը անվիզա ռեժիմ են սահմանում

02.06.2016



Հայաստանն ու Իրանը մտադիր են անվիզա ռեժիմ սահմանել: Միջկառավարական համապատասխան որոշման նախագիծը հավանություն է ստացել հունիսի 2-ին Կառավարության նիստում: Այսպես համաձայնագրով երկու երկրներից մեկի քաղաքացիները կարող են մյուս երկրում գտնվել 90 –ական օր՝ յուրաքանչյուր 180 օրը մեկ:

Նշենք, որ անվիզա ռեժիմի սահմանման հնարավորությունները քննարկվել էին թե դիվանագետների, թե զբոսաշրջային ոլորտի պատասխանատուների հետ:

Փոխարտգործնախարար Ղարաբաղի օկուպացված տարածքները վաղ թե ուշ պետք է վերադարձվեն

13:27, 02.06.2016

Լեռնային Ղարաբաղի օկուպացված տարածքները վաղ թե ուշ պետք է վերադարձվեն դրա կազմ: Այս մասին Կառավարության հունիսի 2-ի նիստից հետո լրագրողներին ասել է փոխարտգործնախարար Շավարշ Քոչարյանը:

Լեռնային Ղարաբաղում սահմանամերձ 800 հա տարածքի կորուստը մեկնաբանելու խնդրանքին Քոչարյանը պատասխանել է. Եկեք արձանագրենք, որ Ադրբեյջանը օկուպացրել է Մարտունու ու Մարտակերտի շրջանները, որոնք ընդ որում չափերով շատ ավելի մեծ են: Եվ վաղ թե ուշ այդ տարածքները կվերադարձվեն Լեռնային Ղարաբաղին:

Արգենտինայի նախագր ճանաչել է Հայոց ցեղասպանությունը

15:02, 01.06.2016

Արգենտինայի Էնտրե Ռիոս նախագր հավանություն է տվել օրինագծին, որի համաձայն, նախագր հավատարիմ է մնում Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրենքին, հաղորդում է Prens Armenia-ն:

Բացի այդ, մայիսի 31-ին տեղի է ունեցել Արգենտինայի հայ համայնքի ներկայացուցիչների հանդիպումը նահանգապետի տեղակալ Ադան Ումբրտո Բալի եւ սենատոր Լուկաս Լարարտեի հետ:



Օրենք ուժի մեջ մտնելուց 10 տարի անց, որի շնորհիվ Արգենտինան դարձավ Հայոց ցեղասպանության ճանաչման համար պայքարի առաջամարտիկներից մեկը, շատ կարելու է, որ Էնտրե Ռիոսի բնակիչների ներկայացուցիչները որոշեցին միանալ այդ ճանապարհին,-հայտարարել է Բուենոս Այրեսի Հայ դատի հանձնախմբի տնօրեն Նիկոլաս Սարունյանը:

Հերթը հանցանքի տեր հանդիսացող Թուրքիայինն է. Փայլանը՝ Բունդեսթագի որոշման մասին

16:40, 04.06.2016



Գերմանիայի կողմից Հայոց ցեղասպանության հետ առերեսվելը որպես Օսմանյան Թուրքիայի դաշնակից եւ հանցակից, պատմական կարեւորություն ունի: Այս մասին հայտարարել է քրդական Ժողովուրդների դեմոկրատական եւ կուսակցության հայ պատգամավոր Կարո Փայլանը:

Քրդական Dayanışma կայքի փոխանցմամբ՝ Բունդեսթագի որոշումից հետո Կարո Փայլանը նշել է, թե Հայոց ցեղասպանությունն իրականացվել է գերմանացի սպաների ու պաշտոնյաների աչքի առաջ, որոնք աջակցել են ծրագրավորմանն ու հանցանքի կոծկմանը: Պատմական կարեւորություն ունի, որ Հայոց ցեղասպանության հանցակից Գերմանիան առերեսվում է Ցեղասպանության հետ:

Սակայն ամենակարեւորը, որ հանցանքի իրական տեր հանդիսացող Թուրքիան առերեսվի ու փրկվի ցեղասպան ավանդույթից,-ասել է Կարո Փայլանը:

Հիշեցնենք, որ հունիսի 2-ին Գերմանիայի խորհրդարանն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւը, որտեղ նշվում է, որ Բունդեսթագը խոնարհվում է 101 տարի առաջ Օսմանյան կայսրությունում հարկադիր տեղահանության եւ ջարդերի ենթարկված հայերի եւ մյուս քրիստոնյա փոքրամասնությունների առջև: Բանաձեւում նաեւ նշվում է, որ Բունդեսթագը ցավում է, որ ժամանակին Գերմանիայի կառավարությունը ոչինչ չի ձեռնարկել՝ կանգնեցնելու մարդկության դեմ հանցանքը, որի համար Բունդեսթագն ընդունում է Գերմանիայի պատմական պատասխանատվությունը:

Ադրբեջանը որպես երեւոյթ պատմական ամենամեծ խեղաթուրումն է. Արտակ Չաքարյան

13:36, 04.06.2016



Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ընդհանրապես իրավունք չունի պատմությունից խոսելու եւ որեւէ գնահատական տալու Գերմանիայի Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ ընդունած բանաձեւին: Այս մասին այսօր՝ հունիսի 4-ին, մեզ հետ զրույցում ասաց ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Չաքարյանը՝ անդրադառնալով Գերմանիայի Բունդեսթագի կողմից հայոց ցեղասպանության բանաձեւի վերաբերյալ Ալիևի մեկնաբանություններին:

Ադրբեջանի պատմությունն ինքնին խեղաթուրված է, Ադրբեջանը որպես երեւոյթ պատմական ամենամեծ խեղաթուրումն է եւ այն ինչ-որ ասել է Ալիևը՝ հետեւանք է այն կեղծ, այլասերված ու խեղաթուրված դասագրքերի, որոնք տարիներ շարունակ Ադրբեջանում գրել են գեղծարարները: Ալիևը հենց այդ կեղծ դասագրքերի վրա էլ մեծացել է եւ այսօր այդպիսի հայտարարություններ է անում,-ասաց նա՝ հավելելով, որ զավեշտալի է, որ բռնապետ Ալիևը ժողովրդավարության դասեր է տալիս Գերմանիային: Արտակ Չաքարյանը նշեց, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի եւ Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմի՝ Բաքվում կայացած հանդիման ժամանակ արած այն հայտարարությունը, թե հայկական հարցը մեծ երկրների ձեռքում վերածվել է գործիքի, Ալիևի երեւակայության արդյունքն է. Եթե մի պետության համար համամարդկային արժեքները, մարդու իրավունքները եւ պատմական հիշողությունը արդարության վերականգման համար ոչինչ են եւ ընդամենը գործիք, ապա դա խոսում է կեղծ երեւոյթի մասին, որը կոչվում է Ադրբեջան:

Անդրադառնալով Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմի այն հայտարարությանը, թե Ադրբեջանի ընկերը մեր ընկերն է, Ադրբեջանի թշնամին մեր թշնամին է, Չաքարյանը նշեց՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի իշխանությունների կողմից

միմյանց սիրաշահող հայտարարությունները դժվար է չափել, թե իրականության մեջ ինչ արժեք ունեն։ Ես այդքան էլ չեմ հավատում այդ հայտարարություններին եւ կարծում եմ, որ դրանք կեղծ են։

Նշենք, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հունիսի 3-ին Բաքվում Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմի հետ համատեղ մամուլի ասուլիսում դատապարտել է Բունդեթագի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւը՝ նշելով, որ Գերմանիայի կողմից դա անարդար քայլ է եղել, երկակի ստանդարտների ցուցաբերում, պատմության խեղաթուրում ու սադրանք։

Գերմանիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը 100 տարի ուշացած է. Բուրդ կուսակցապետ

02:11, 04.06.2016



Թուրքիայի քրդական ժողովուրդների դեմոկրատական (HDP) կուսակցության առաջնորդ Սելահաթին Դեմիրթաշը արձագանքել է Գերմանիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւին։

Թուրքական Diken պարբերականի փոխանցմամբ՝ HDP-ի առաջնորդ Սելահաթին Դեմիրթաշը նշել է, թե Գերմանիայի կողմից ընդունված Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւը Թուրքիայի համար պատժամիջոց չէ։ Այդ որոշումը 100 տարի ուշացած որոշում է։ Հիմա էլ Թուրքիայում քրդերին են ցեղասպանության ենթարկում։ Եթե Գերմանիան սրա հետ կապված 100 տարի հետո որոշում կայացնի, դա իմաստ չի ունենա, -ասել է Սելահաթին Դեմիրթաշը։

Նշենք, որ HDP-ն Թուրքիայի խորհրդարանի միակ կուսակցությունն է, որը պաշտոնապես ճանաչում է Հայոց ցեղասպանությունը։

Գերմանիան, ընդունելով իր մեղսակցությունը ցեղասպանությանը, այժմ պետք է հատուցում վճարի հայ ժողովրդին

10:10, 08.06.2016

Գերմանիան, ընդունելով իր մեղսակցությունը ցեղասպանությանը, այժմ պետք է հատուցում վճարի հայ ժողովրդին։ Այս մասին իր հոդվածում գրում է Կալիֆորնիա Կուրիերե թերթի հրատարակիչ և խմբագիր Հարութ Սասունյանը։

Նա մասնավորապես, նշել է.

«Չնայած լայն ժողովրդական վիրավորանքներին և սպառնալիքներին՝ Գերմանիայի խորհրդարանն անցյալ շաբաթ համարձակորեն առաջ գնաց և ճանաչեց Հայոց ցեղասպանությունը։ Դրան ի պատասխան՝ Թուրքիան անմիջապես հետ կանչեց իր դեսպանին Բեռլինից։

Բունդեթագի պատմական բանաձեւը, որն ընդունվեց գրեթե միաձայնորեն (ընդամենը 1 դեմ և 1 ձեռնպահ), կրում է հետևյալ խորագիրը. «Ի հիշատակ և ոգեկոչում Օսմանյան կայսրությունում 101 տարի առաջ հայերի և մյուս քրիստոնյա փոքրամասնությունների ցեղասպանությանը»։ Ըստ ARD հեռուստատեսության՝ Գերմանիայի բնակչության 74 տոկոսը համաձայն է, որ հայերի դեմ ցեղասպանություն է իրագործվել։ Ըստ Ծայիգելե ամսագրի մեջբերած մեկ այլ հետազոտության՝ Գերմանիայի հասարակության 91 տոկոսը չի վստահում Էրդողանին...

Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, զայրացած Էրդողանի հաճախակի շանտաժներից, որոշեց Թուրքիայի մեծամոլ բռնակալին իր տեղը դնել, մինչդեռ նախագահ Օրաման քաջություն չունեցավ նույնը անելու... Գերմանիայի ղեկավարությունն ստիպված էր դիմակայել ոչ միայն թուրքական վարչակարգի հարձակումները, այլ նաև Գերմանիայում ապրող երեք միլիոն թուրքերից շատերի սուր քննադատությունը։



Խորհրդարանի որոշումից հետո Էրդողանը հոխորտաց. «Մենք մեր անցյալից ամաչելու պատճառ չունենք, սակայն Հայոց ցեղասպանությանն համար Թուրքիային հաճախ մեղադրող երկրների վրա միլիոնավոր անմեղ մարդկանց արյուն կան։ Թուրքիայի արդարադատության նախարար Բեքիր Բոզդաղը նույնքան լկտիաբար ասաց գերմանացիներին. «Առաջինը դուք այրեցիք հրեաներին վառարաններում, իսկ հիմա եկել ու թուրք ժողովրդին եք մեղադրում ցեղասպանության մեջ»։ Էրդողանին և Բոզդաղին պետք է հիշեցնել, որ Գերմանիան, ի տարբերություն Թուրքիայի, վաղուց ընդունել է նացիստական ժամանակաշրջանի հանցագործությունները, ներողություն խնդրել Հոլոքոստի համար և վճարել միլիարդավոր դոլարների փոխհատուցում։

Մնում է տեսնել, թե պոռոտախոս թուրք ղեկավարները կհամարձակվեն արդյոք պատժիչ գործողություններ ձեռնարկել Գերմանիայի դեմ, բացի իրենց դեսպանի սովորական հետևանքից, ինչպես ամեն անգամ անում են, երբ որևէ կառավարություն ճանաչում է Հայոց ցեղասպանությունը։ Եթե Էրդողանը որոշի ավելի առաջ գնալ դատարկ սպառնալիքների շրջանակներից, ապա նման քայլերը բացասական հակազդեցություն կունենան հենց Թուրքիայի վրա, քանի որ Գերմանիան նրա խոշորագույն առևտրային գործընկերն է։ Թուրքիայի տնտեսությունն արդեն իսկ լուրջ դժվարություններ ունի այն բանից հետո, երբ Ռուսաստանն արգելեց թուրքական ապրանքների ներմուծումը և անցանկալի համարեց իր քաղաքացիների

այցը Թուրքիա որպես գրոսաշրջիկ՝ նախորդ տարի Միրիայի սահմանի մոտ թուրքական զինվորականների կողմից ռուսական ուղղաթիռի խոցման պատճառով:

Թուրք ղեկավարներն արդեն վնասել են իրենց երկրի շահերը՝ սադրիչ և սկանդալային հայտարարություններ անելով, որոնք նպաստում են Գերմանիայի Բունդեսլանդի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հրապարակայնացմանը ամբողջ աշխարհում: Հազարավոր թերթեր, կայքեր, ռադիո և հեռուստակայաններ անդրադարձան գերմանական որոշմանը և թուրքական պոռթկումներին: Հատկանշական է, որ միջազգային լրատվամիջոցները հատուկ ուշադրություն էին դարձնում Գերմանիայի խորհրդարանների խոստովանությանը, որ իրենց երկիրն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ լինելով Թուրքիայի ռազմական դաշնակիցը, մեղսակից է Հայոց ցեղասպանությանը:

Աշխարհի ամենահեղինակավոր թերթերից երկուսը՝ Նյու Յորք թայմս-ը և Լոնդոն Թայմս-ը, հունիսի 3-ին հզոր խմբագրականներ հրապարակեցին՝ վերահաստատելով Հայոց ցեղասպանության փաստերը, աջակցելով Գերմանիայի խորհրդարանի որոշմանը և կոչ անելով Թուրքիային առերեսվել իր անցյալի մուխ էջերին:

Նյու Յորք թայմս-ն իր Այո, դա Ցեղասպանություն է վերաառաջացրեց խմբագրականում գրել է. «Դա ցեղասպանություն էր, 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը... Պատմական հաշվեհարդարի համար հայերի պահանջը լիովին արդարացված է... Նախագահ Օբաման, որը 2008 թ. թեկնածու եղած ժամանակ խոստացավ ճանաչել 1915 թ. իրադարձությունները որպես ցեղասպանություն, չկատարեց իր խոստումը... Գերմանացիները, որոնք հիանալի կերպով դիմակայեցին իրենց սեփական պատմության սարսափելի ցեղասպանությունը, ճիշտ քայլ կատարեցին՝ արհամարհելով Էրդոդանի սպառնալիքները:

Լոնդոն Թայմս-ի խմբագրականը՝ Ցեղասպանության ժխտում. հայերի զանգվածային ջարդը պետք է ճանաչվի Թուրքիայի կողմից, նույնքան ազդեցիկ էր. Գերմանական բանաձևը ճիշտ է ոչ միայն իր ուղերձով, այլև դիվանագիտության մեջ: Թուրքական գայրույթը պարբերաբար ուղղվում է բոլոր դաշնակից երկրների դեմ, որոնք ճանաչում են Հայոց ցեղասպանությունը: Այդ արձագանքը անարժան և հակապատմականից ավելի վատն է. այդ անասելի չափերի տառապանքի ժխտումը մինչ օրս թունավորում է Եվրոպայի քաղաքականությունը և պետք է վիճարկվի: Հայերի ջարդը, ինչպես թուրք ժխտողականներն են պնդում, պատերազմի ժամանակ տեղի ունեցած չնախատեսված, սակայն անխուսափելի ողբերգություն չէր: Այն օսմանյան վարչակարգի կողմից կազմակերպված տեղահանման և զանգվածային սպանդի հատուկ ծրագիր էր... Ժամանակակից Գերմանիան և նրա պետական արյունը բազմիցս արտահայտել են իրենց ժողովրդի գոշումը անցյալ դարի ցեղասպանական բարբարոսության համար: Վաղուց ժամանակն է, որ Թուրքիան նույնն անի:

Գերմանիան, ճանաչելով Հայոց ցեղասպանությունը և ընդունելով իր պատասխանատվությունն ու մեղսակցությունը, այժմ պետք է համապատասխան հատուցում վճարի հայ ժողովրդին՝ դրանով իսկ արժանի օրինակ ծառայելով Թուրքիայի համար, ոչ միայն ճանաչման, այլ նաև հատուցման գործում...

Մենդելևի աղյուսակի 118-րդ տարրը կկոչվի Յուրի Հովհաննիսյանի անունով



Մենդելևի աղյուսակի 115-րդ ու 118-րդ տարրերը կստանան .մոսկովիումեն(Mc) ու .օգանեսոնեն(Og) ի պատիվ Մերձմոսկովյան շրջանի Դուբնա քաղաքում գտնվող Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի և ինստիտուտի պրոֆեսոր Յուրի Հովհաննիսյանի:

113-րդ տարրը կանվանակոչվի նիհոնիում ի պատիվ ճապոնացի գիտնականների, 117-րդ տարրը՝ տենեսին, ի պատիվ Թենեսի նահանգի, հայտնում է PanArmenian-ը՝ հղում կատարելով Pure and Applied Chemistry ամսագրին: Յուրի Յուրի Հովհաննիսյանը ծնվել է 1933 թվականին Դոնի Ռոստովում: 1976-1989 թթ. եղել է Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) միջուկային ռեակցիաների լաբորատորիայի փոխտնօրեն, 1989-1997 թթ.՝ տնօրեն, 1997 թվականից՝ գիտական ղեկավար, միաժամանակ, 1971 թվականից՝ նույն լաբորատորիայի ծանր միջուկների հետազոտման բաժնի պետ: 1969-1970 թթ.՝ Փարիզի համալսարանի պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի, Ֆրանկֆուրտի (Գերմանիա), Մեսինայի (Իտալիա) համալսարանների պատվավոր դոկտոր:

Երևանն ու Բաքուն պայմանավորվել են Ղարաբաղում ավելացնել միջազգային դիտորդների թիվը. հայտարարություն (Փոտո)

20:28, 20.06.2016



Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները պայմանավորվել են ավելացնել ղարաբաղյան հակամարտության գոտում միջազգային դիտորդների թիվը: Այս մասին նշված է հունիսի 20-ին Սանկտ Պետերբուրգում կայացած Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների եռակողմ հանդիպման արդյունքներով տարածված հայտարարությունում: Դրանում, մասնավորապես, ասված է.

Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահները 2016 թվականի հունիսի 20-ին հանդիպեցին Սանկտ Պետերբուրգում՝ ՌԴ Նախագահի հրավերով, եւ քննարկեցին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը վերաբերող հարցեր: Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանական Հանրապետության նախագահները վերահաստատեցին Վիեննայում մայիսի 16-ին կայացած հայ-ադրբեջանական գագաթաժողովի պայմանավորվածությունները՝ ուղղված հակամարտության գոտում իրավիճակի կայունացմանը եւ խաղաղ գործընթացի առաջընթացին նպաստող մթնոլորտի ստեղծմանը:

Այդ նպատակով նրանք համաձայնեցին, մասնավորապես, մեծացնել հակամարտության գոտում միջազգային դիտորդների թիվը: Նրանք գոհունակություն հայտնեցին վերջին շրջանում շփման գծում հրադադարի ռեժիմի պահպանման կապակցությամբ: Կայացավ կարգավորման առանցքային/բովանդակային հարցերի շուրջ մտքերի հանգամանակից փոխանակում:

Պետությունների ղեկավարները փաստեցին մի շարք հարցերի կապակցությամբ փոխըմբռնման հասնելու հանգամանքը, որոնց լուծումը հնարավորություն կընձեռի պայմաններ ստեղծել առաջընթաց արձանագրելու ԼՂ հիմնախնդրի կարգավորման հարցում: Նախագահները նշեցին իրենց կանոնավոր շփումների կարևոր նշանակությունը եւ պայմանավորվեցին շարունակել դրանք նման ձեւաչափով՝ ի հավելումն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքի, ովքեր հրավիրված էին Սանկտ Պետերբուրգում կայացած հանդիպման ավարտին:

Հռոմի Պապը վերահաստատեց իր դիրքորոշումը. 1915թ. Ցեղասպանություն է տեղի ունեցել

19:26, 24.06.2016

Հռոմի Ֆրանցիսկոս Պապն այսօր՝ հունիսի 24-ին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նստավայրում ունեցած իր ելույթում անդրադառնալով 1915 թվականի դեպքերին, օգտագործել է «ցեղասպանության» բառը՝ նկարագրելով Օսմանյան Կայսրությունում հայերի նկատմամբ տեղի ունեցած գազանային

հանցագործությունները: Հատկանշական է, որ Հռոմի պապի ելույթի նախնական տարբերակում «ցեղասպանություն» եզրը չի եղել, սակայն Ֆրանցիսկոս Պապը փոփոխություն է արել եւ օգտագործել է այն՝ բնութագրելով 1915թ. իրադարձությունները:

Նա, մասնավորապես, նշել է. «Սրտանց երախտապարտ եմ Ձեզ, պարոն նախագահ, Հայաստանի Կառավարության եւ բնակչության անունից ինձ ուղղված Ձեր բարի գալուստի սիրալիր խոսքերի համար, ինչպես նաեւ ինձ հնարավորություն ընձեռելու համար՝ Ձեր ազնիվ հրավերի շնորհիվ, փոխադարձելու անցյալ տարի Վատիկան կատարած Ձեր այցը, երբ Սուրբ Պետրոսի տաճարում՝ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա-ի, եւ Տանն Կիլիկիո Կաթողիկոս հայոց Պատրիարք երջանկահիշատակ Ն.Ե.Ներսես Պետրոս XIX-ի հետ միասին, ներկա գտնվեցիք հանդիսավոր արարողությանը:

Այդ առիթով հիշատակվեց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցը, որը հարվածեց ձեր ժողովրդին եւ որը անչափ անհամար գոհեր պատճառեց: Այդ ողբերգությունը, այդ ցեղասպանությունը, ցավոք, գլխավորեց անցյալ դարի անմարդկային աղետների տխուր ցուցակը, որոնք իրականացվեցին ցեղապաշտական, գաղափարախոսական եւ կրոնական մոլորեցնող շարժառիթներով եւ որոնք մթագնեցին մարդասպանների միտքը, ովքեր նպատակադրվեցին ոչնչացնելու մինչեւ իսկ ամբողջ ժողովուրդները:

Հիշեցնենք, որ նախորդ տարի, ապրիլի 12-ին, Վատիկանում Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված պատարագի ժամանակ Հռոմի Ֆրանցիսկոս Պապը 1915 թվականի դեպքերը կոչել էր 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, որին ենթարկվել են հայերը՝ իրենց ազգային պատկանելության համար:

Մեր մարդկությունը անցած դարում ապրել է երեք մեծագույն, չսլած ողբերգություն: Առաջինին, որ համընդհանուր ձեւով սահմանվում է որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, զոհ գնացին հայերը, նաեւ հույներն ու ասորիները: Մյուսը երկուսի պատասխանատուն նացիզմն ու ստալինիզմն էին, - ասել էր Հռոմի պապը:

Նրա խոսքով՝ այս ոճրագործությունը հիշելը պարտադիր է, որովհետեւ որտեղ հիշատակ չկա, այնտեղ չարիքը դեռ բաց է պահում վերքը, իսկ ծածկել հանցանքը նշանակում է թողնել, որ վերքն արնահոսի առանց դարման ստանալու:



Սրանք հզոր պատկերներ են. Հռոմի Պապը նախագահի նստավայրում Չարենց է արտասանել

19:06, 24.06.2016

Հռոմի Ֆրանցիսկոս Պապը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նստավայրում ունեցած իր ելույթում արտասանել է Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանն բանաստեղծությունից մի հատված:

Նա, մասնավորապես, նշել է.

«...Երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե, Արեւն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ, ... հազարամյա քարը ... աղոթք դարձած երկաթագիր գրերը մերե: Սրանք մի քանի հզոր պատկերներ են, որոնք Ձեր հոչակավոր բանաստեղծը մեզ է ընծայում՝ լուսավորելու համար մեզ Հայաստանի պատմության խորության եւ բնության գեղեցկության մասին: Դրանք քիչ խոսքերի մեջ ամփոփում են մի ամբողջ ժողովրդի փառավոր եւ ողբերգական փորձառության արձագանքն ու խտությունը եւ տոգորող սերը Հայրենիքի հանդեպ:

Ագրամունտը հրաժարվել է պատասխանել աղբբեջանցիների վայրագությունների մասին NEWS.am-ի թղթակցի հարցին

18:28, 01.07.2016



Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵԽՄԿ) նախագահ, իսպանացի խորհրդարանական Պեդրո Ագրամունտը, որը հայտնի է իր միակողմանի աղբբեջանամետ դիրքորոշմամբ, հրաժարվել է պատասխանել այս տարվա ապրիլյան պատերազմի սկզբում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության նկատմամբ աղբբեջանական զինված ուժերի իրագործած դաժանությունների մասին NEWS.am-ի հարցին: Իմանալով, որ լրագրողը Հայաստանն է ներկայացնում, նա անմիջապես մոռացել է քաղաքավարի ժպիտի մասին եւ շտապել է տեղեկացնել, որ մոտ ապագայում մամուլի համար հայտարարությամբ հանդես կգա:

Հիշեցնենք, որ 2016-ի ապրիլին մարտական գործողությունների ընթացքում ԼՂՀ-ի Պաշտպանության բանակի զինծառայողների սպանության եւ աղբբեջանցի զինծառայողների կողմից նրանց մարմինները ծաղրելու փաստով քրեական 6 գործ է հարուցվել: Փորձաքննության արդյունքների համաձայն, Քյարամ Սյուլանը եւ Հրանտ Ղարիբյանը գլխատվել են մահվանից հետո: Հայկ Թորոյանը գլխատվել է, երբ ողջ է եղել: Հանցագործները նաեւ կտրել են զինծառայողի ձեռքերը: Հրանտ Ղարիբյանի եւ Հայկ Թորոյանի գլուխները մինչեւ հիմա չեն վերադարձվել: Ռաֆիկ Հակոբյանի, Աղասի Ասատրյանի, Անդրանիկ Չոհրաբյանի, Ռոբերտ Աբաջյանի, Ալեքսան Առաքելյանի, Օնիկ Գրիգորյանի, Ռոման Պողոսյանի, Սուրեն Մելքումյանի, Մաքսիմ Գրիգորյանի, Ժորա Եսայանի, Բագրատ Ալեքսանյանի, Բորիս Օգմանյանի, Գրիգոր Հարությունյանի, Ադամ Սահակյանի, Անդրանիկ Գրիգորյանի ականջներն են կտրված եղել: Արման Անդրեասյանի աջ ականջն է կտրված եղել, կտրվածքներ են եղել կրծքին: Ազատ Սիմոնյանի աջ ձեռքի մատն է կտրված եղել: Աշոտ Շահբազյանի ձախ աչքն են հանել:

Երեւանում կայացել է Ֆրանկ-Վալտեր Շթայնմայերի եւ Բակո Սահակյանի հանդիպումը

09:44, 30.06.2016

Երեւանում հունիսի 30-ի վաղ առավոտյան կայացել է ԵԱՀԿ գործող նախագահ, Գերմանիայի արտգործնախարար Ֆրանկ-Վալտեր Շթայնմայերի եւ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հանդիպումը:

Լրագրողների հետ զրույցում ԼՂՀ արտգործնախարար Կարեն Միրզոյանը նշեց, որ հանդիպումը կայացել է շատ անկեղծ մթնոլորտում: .Կողմերը կարծիքներ են փոխանակել, որոնք հիմնականում վերաբերում են ստեղծված իրավիճակից ելք փնտրելուն,– ասել է նախարարը: Նա հիշեցրեց, որ արդեն երկար ժամանակ քննարկվում են քայլերը, որոնք թույլ կտան վերականգնել բանակցային գործընթացը: Մասնավորապես, դա միջադեպերի հետաքննության մեխանիզմներ ստեղծելն է եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի թիմի հնարավորությունների ընդլայնումը:



.Մենք ներկայացրել ենք մեր տեսակետը այդ հարցերի կապակցությամբ: Նշվել է, որ այդ առաջարկները համահունչ են նրան, ինչ արցախյան կողմը վաղուց առաջարկում է՝ դեռ 2000-ականների սկզբից: Արցախյան կողմը ներկայացրել է եւ այլ առաջարկներ, որոնց իրականացումը ոչ միայն թույլ կտա հաղթահարել հակամարտության կողմերի միջեւ անվստահությունը, այլ նաեւ ապահովել բանակցային գործընթացի անարգել առաջխաղացումը,– ասել է Կարեն Միրզոյանը:



Անդրադառնալով ,Լավրովի պլանին մասին խոսակցություններին, որն իբր թե ենթադրում է 5 շրջանները փոխանակել կարգավիճակի հետ, նախարարը նշեց. .Ինչպես Դուք ինքներդ ասացիք, դրանք ընդամենը խոսակցություններ են»:

Ադրբեջանական ագրեսիայի գործով ավելի քան 300 փորձաքննություն է նշանակվել

00:26, 29.06.2016



Ապրիլին Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ագրեսիայի հետ կապված քրեական գործի շրջանակում ավելի քան 550 մարդ տուժող է ճանաչվել:

NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում ԼՂՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչ Կարեն Գաբրիելյանը նշեց, որ քրեական գործը բաղկացած է 45 հատորից, յուրաքանչյուրը՝ 250 էջ:

Գործի նյութերի համաձայն՝ ագրեսիայի հետեւանքով 4 քաղաքացիական անձ է սպանվել, այդ թվում՝ մեկ անչափահաս: Երեք տարեցների մարմինները ծաղրի են ենթարկվել (կտրել են նրանց ականջները - խմբ.) ադրբեջանցի զինծառայողների կողմից:

Տուժող են ճանաչվել ավելի քան 850 քաղաքացիներ. Մատաղիսի 226 բնակիչ, Թալիշի 130 բնակիչ, Մարտակերտի 54 բնակիչ, Մարտունու 269 բնակիչ, Հադրութի 2 բնակիչ, Ակսերանի 1 բնակիչ: Եվս 185 քաղաքացի ներկայում Հայաստանում է, որոնք նույնպես տուժած են ճանաչվել: Այս անձինք ագրեսիայի հետեւանքով նաեւ նյութական վնաս են կրել, նրանք հրետակոծության ժամանակ իրենց տներում են գտնվել եւ կարող էին սպանվել կամ վիրավորվել:

341 նյութատեխնիկական փորձաքննություն է նշանակվել (տներ, ճանապարհներ, գյուղատեխնիկա): 282 փորձաքննությունների արդյունքներն արդեն ստացվել են: Դրանց մասով հասցված վնասը գնահատվում է 778 մլն 899 հազար դրամ:

Հետաքննության շրջանակում զննության են ենթարկվել տուժած բնակավայրերի տներ եւ շինություններ.

Թալիշում՝ 190 շինություն, այդ թվում՝ 167 բնակելի տուն, 1 եկեղեցի, 1 դպրոց եւ 1 մանկապարտեզ, 1 արաղաց, 2 հանդիսասրահ, 4 խանութ, 1 հացագործարան, 1 գյուղական վարչակազմի շենք, 8 ֆերմա:

Մատաղիսում՝ 46 տուն, երկու ՀԷԿ՝ Մատաղիս 1ե եւ Մատաղիս 2ե, 1 դպրոց եւ 1 մանկապարտեզ, Դ-Տելեկոմն-ի 1 աշտարակ:

Մարտակերտում՝ 92 բնակելի տուն, 1 դպրոց եւ 1 մանկապարտեզ, 1 խանութ, տեխսպասարկման կետ, գազատար, Արցախէներգոե-ի մասնաճյուղ, էլեկտրական ցանցեր:

Մարտունու շրջանի Ներքին Ճարտար գյուղում՝ 3 բնակելի տուն եւ դպրոց (այստեղ է սպանվել 12-ամյա Վաղինակ Գրիգորյանը):

Վնասվել է նաեւ 44 տրանսպորտային միջոց:

Հետաքննությունը վարում է ԼՂՀ ոստիկանությունը:

Ադրբեջանի զինված ուժերը, խախտելով 1994 թվականի մայիսի 12-ին ԼՂՀ-ի, Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ կնքված հրադադարի մասին համաձայնագիրը, 2016 թվականի ապրիլի 1-ի լույս 2-ի զիշերը ցամաքային գործերի, օդուժի, հրթիռա-հրետանային միջոցների եւ զրահատեխնիկայի օգնությամբ լայնածավալ ագրեսիվ ռազմական գործողություններ սանձազերծեց ԼՂՀ-ւ դեմ՝ խախտելով Լեռնային Ղարաբաղի տարածքային ամբողջականությունը:

Միաժամանակ, ագրեսիվ պատերազմի ընթացքում Ադրբեջանի ՉՈՒ-ն, նպատակ ունենալով ռազմական առավելության հասնել, կոպտորեն խախտելով միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը, պատերազմ վարելու արգելված մեթոդներ կիրառելով, թիրախ դարձրեց խաղաղ բնակավայրերը, քաղաքացիական բնակչությանը, դպրոցները, շենքերը, ճանապարհները, այլ կառույցներ եւ առանձին քաղաքացիական անձանց, ինչը հանգեցրեց բազմաթիվ մարդկանց մահվան, այդ թվում՝ երեխաների մեծ քանակությամբ անշարժ գույքի ոչնչացման:

Արման Թաթոյանը ՄԱԿ-ին է ներկայացրել Արցախի դեմ Ադրբեջանի դաժանությունները

27.06.2016



Ժնևում, այսօր՝ հունիսի 27-ին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը հանդիպել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնակատարի Ամերիկայի եւ Կենտրոնական Ասիայի գրասենյակի ղեկավար Ջիաննի Մագազզենիին եւ ներկայացրել Արցախի դեմ Ադրբեջանի դաժանությունները:

ՄԻՊ գրասենյակից մեզ հայտնում են, որ Թաթոյանը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակին է ներկայացրել ապրիլի սկզբին Ադրբեջանի նախաձեռնած ռազմական ագրեսիայի ընթացքում Արցախի Հանրապետության քաղաքացիական բնակչության նկատմամբ կատարված մարդու հիմնարար իրավունքների խախտումները, Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում տեղ գտած դաժանությունների կոնկրետ օրինակները:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ընդգծել է, որ ազգությամբ հայերի նկատմամբ ստեղծվել են բռնություն սերմանող ադրբեջանական ագրեսիվ քաղաքականությունը կործանարար է միջազգային քաղաքակրթությանը իրավապաշտպան համակարգի համար: Այդ քաղաքականությունն Ադրբեջանում խրախուսվում է

պետական մակարդակով: Ա. Թաթոյանը կարելիորել է Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավման անհրաժեշտությունը մարդու իրավունքներին առնչվող միջազգային մակարդակի հանդիպումներին ու քննարկումներին: Հանդիպման ընթացքում արձանագրվել է, որ մարդու իրավունքների խախտումներն անթույլատրելի են ցանկացած պարագայում. իրավունքների պաշտպանությունը քաղաքականություն կամ սահմաններ չի կարող ճանաչել:

Կողմերը քննարկել են նաև Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կանխարգելման ազգային մեխանիզմի կարողությունների զարգացման, գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ համատեղ ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը:

Հանդիպման ընթացքում կողմերը կարելիորել են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կանխարգելիչ ակտիվ գործունեության իրականացումը երկրում մարդու իրավունքների միջազգային չափանիշների ներդրման ուղղությամբ: Նշվել է այդ առումով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ լրատվության միջոցների հետ համագործակցության կարելիությունը: Ընգծվել է մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված համատեղ աշխատանքի անհրաժեշտությունը խորհրդարանի, դատական իշխանության մարմինների եւ մյուս գործընկերների հետ:

Հանդիպմանը քննարկվել են նաև ընտանեկան բռնության կանխարգելման, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, ինչպես նաև մի շարք այլ ոլորտների վերաբերող հարցեր:

Արևմտյան Հայաստան

Բրիտանացի լրագրող Մի խումբ հայեր կպահանջեն Ինջիրլիք բազայի հողատարածքի վերադարձը

08.06.2016



Մոտ երկու ամսից Ամերիկայի հայերի խումբը դատական կարգով կպահանջի վերադարձնել այն հողատարածքը, որտեղ Թուրքիայում կառուցված է ամերիկյան Ինջիրլիք ռազմակայանը: Այս մասին ասվում է բրիտանացի լրագրող Ռոբերտ Ֆիսկի հոդվածում:

Երեք հայ, ԱՄՆ քաղաքացիներ, վիճարկելու են իրավունքը Ադանա քաղաքից մի քանի մղոն հեռավորության վրա գտնվող հողատարածքի նկատմամբ, որտեղ տեղակայված է

ՆԱՏՕ-ի հարավային հրամանատարության ԱՄՆ ռազմաօդային կայանը: Հողվածագրի խոսքով, հարյուր տարի առաջ այդ հողերը հայերին էին պատկանում՝ այնտեղ էին գտնվում Ադանայում բնակվող հայերի ազարակները, տները, եկեղեցին ու դպրոցը, նաև ամառանոցները: Այնտեղ ապրող գրեթե բոլոր հայերը ոչնչացվել են Օսմանյան կառավարության կազմակերպած Ցեղասպանության ժամանակ: Ֆիսկի խոսքով, կայանը նաև թուրքական կործանիչների տեղակայման վայրն է, որոնք ռմբակոծում են քուրդ խռովարարներին:


Դատավարությունը, որը անցնելու է օգոստոսի 9-ին Քալիֆորնիայում, ներկայացնելու է Ալեքս Բաքալյանի, Անախ Հարությունյանի ու Ռիտա Մագդեյանի իրավունքները: Այս դատական հայցին կարող է միանալ եւս 13 հայ:

Երեք հայերի դատապաշտպանները հիմք են ընդունում ԱՄՆ պետքարտուղար Ջոն Բերիի վերջին հայտարարությունը, որով նա ճանաչում է քրիստոնյաների, եզդիների ու շիա խմբերի դեմ ԻԴ-ի իրականացրած ցեղասպանությունը:

Անկասկած այս պատմական դատավարությունը պայթուցիկ քաղաքական ուղերձ է պարունակում՝ եթե Հայոց ցեղասպանությունը ճանաչվի ԱՄՆ դատարանում, ապա Վաշինգթոնի կառավարության կողմից այդ բառի գործածումը 1915-ի զանգվածային կոտորածների նկարագրության համար ընդամենը ժամանակի հարց կդառնա, - նկատել է Ֆիսկը:

Արամ Աթեշյանը պրոթուրքական կեցվածք է դրսևորել. Արագած Ախոյան

08.06.2016



Պոլսո հայոց կաթողիկոսության ընդհանուր փոխանորդ, արքեպիսկոպոս Արամ Աթեշյանը պրոթուրքական կեցվածք է դրսևորել: Այս մասին, այսօր՝ հունիսի 8-ին, Ազգային ժողովում լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է ԲՀԿ խմբակցության անդամ Արագած Ախոյանը:

Նա նշել է, որ Մայր Աթոռը պատասխանատու չէ Արամ Աթեշյանի հայտարարությունների համար: Մայր Աթոռը համարյա թե իրավասություններ չունի այս հարցում, եւ մի խառնեք նրան այս գործին: Այս պարագայում միակ ելքը պատրիարքի նոր ընտրություններ անցկացնելն է, ինչը, բնականաբար, Արամ Աթեշյանի սրտով չի լինի, քանի որ նա թուրքահաճո իր գործողություններով երկարաձգում է իր պաշտոնավարումը, - ասել է նա:

Արագած Ախոյանը նշել է, որ միակ ճանապարհն այն է, որ Արամ Աթեշյանն ինչքան հնարավոր է շուտ հրաժարվի իր պաշտոնից. Պետք է նոր պատրիարքի ընտրություններ լինեն եւ պատրիարքը պետք է հասկանա հայ ժողովրդի հետաքրքրություններն ու թուրքահաճո քաղաքականություն չվարի:

Նշենք, որ Պոլսոյ հայոց պատրիարքական փոխանորդ արք. Արամ Աթեշյանը, ով ոչ թե ընտրվել է հայ համայնքի կողմից, այլ նշանակվել Էրդողանի կողմից, Բունդեսթագի բանաձեւի հետ կապված նամակ է գրել Էրդողանին՝ հայ համայնքի անունից քննադատելով Գերմանիայի որոշումը՝ պնդելով, թե իմպերիալիստները հայկական հարցն ու հայերի վիշտը օգտագործում են իրենց շահերի համար: Նամակում Աթեշյանը ավստսանք է հայտնել Գերմանիայի ընդունած բանաձեւի համար:

Ստամբուլի հայկական «Ակոս»-ն էլ իր հերթին բաց նամակ էր հղել Աթեշյանին՝ շեշտելով, որ ամոթի ու զայրույթի զգացում են ընթերցել Էրդողանին ուղղված Աթեշյանի նամակը: «Ակոս»-ի նամակում շեշտվել է, որ Աթեշյանի նամակի բովանդակությունը վիրավորանք է հայ ժողովրդի նախնիների, գոհերի ու ժառանգների համար:

Կաթողիկոսը պետք է դնի արք. Արամ Աթեշյանին կարգալույծ անելու հարցը. Նաիրա Չոհրաբյան

08.06.2016

Պոլսոյ հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ արք. Արամ Աթեշյանի՝ Էրդողանին ուղղված նամակը աննախադեպ խայտառակություն է հայոց ողջ պատմության մեջ: Նման խայտառակություն է արել ԱԺ-ում ԲՀԿ խմբակցության ղեկավար Նաիրա Չոհրաբյանը:

Նաիրա Չոհրաբյանի խոսքով՝ արք. Արամ Աթեշյանի նամակն ուղղված Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին խայտառակ ու անբարո է: «Սա պետական, ազգային դավաճանություն է հոգեւորականի կողմից, որի նախադեպը հայոց ողջ պատմության մեջ չի եղել», - ասել է Չոհրաբյանը՝ շեշտելով, որ իրեն արդեն դիմել են պոլսահայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ:

ԲՀԿ խմբակցության առաջնորդը շեշտել է, թե պետք է ակնկալել, որ Ամենայն հայոց կաթողիկոսը պետք է եկեղեցական կանոնակարգերով, իրեն վերապահված լիազորություններով, ինչպես նաև եկեղեցական ընդհանուր ժողով հրավիրելով՝ դնի արք. Արամ Աթեշյանին կարգալույծ անելու հարցը:

Նշենք, որ Պոլսոյ հայոց պատրիարքական փոխանորդ արք. Արամ Աթեշյանը, ով ոչ թե ընտրվել է հայ համայնքի կողմից, այլ նշանակվել Էրդողանի կողմից, Բունդեսթագի բանաձեւի հետ կապված նամակ է գրել Էրդողանին՝ հայ համայնքի անունից քննադատելով Գերմանիայի որոշումը՝ պնդելով, թե իմպերիալիստները հայկական հարցն ու հայերի վիշտը օգտագործում են իրենց շահերի համար: Նամակում Աթեշյանը ավստսանք է հայտնել Գերմանիայի ընդունած բանաձեւի համար:

Ստամբուլի հայկական «Ակոս»-ն էլ իր հերթին բաց նամակ էր հղել Աթեշյանին՝ շեշտելով, որ ամոթի ու զայրույթի զգացում են ընթերցել Էրդողանին ուղղված Աթեշյանի նամակը:

Դիարբեքիի հայերին ուրախացրել է Գերմանիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը

00:04, 08.06.2016

Գերմանիան շուտ պետք է ընդունեք այդ որոշումը, քանի որ Գերմանիան Ցեղասպանության ժամանակ եղել է Օսմանյան Թուրքիայի դաշնակիցը: Ամերիկայի ձայնի թուրքական

ծառայության հետ զրույցում նման կարծիք է հայտնել Դիարբեքիի հայերից Արմեն Դեմիրջյանը:



Արդունահիմ Չորապանը, ով իրեն ներկայացնում է Արմեն Դեմիրջյան, Գերմանիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւի ընդունումը ուշացած է համարել: Արմեն Դեմիրջյանը նշել է, թե լավ է, որ ընդունեցին, սակայն ուշացել են: «Դա պետք է ավելի վաղ ընդունեին, քանի որ այդ հանցանքը Գերմանիան ու Օսմանյան Թուրքիան միասին են արել: Բայց միեւնույն է՝ ուրախացա, ամենաքիչը իրենք առերեսվեցին անցյալի հետ: Գուցե հետագայում դա Թուրքիայի համար էլ լավ լինի», - ասել է Արմեն Դեմիրջյանը՝ հիշեցնելով, որ ինքը 20 տարեկանում է իմացել, որ հայ է ու իր պապը հագիվ է փրկվել Ցեղասպանության ժամանակ:

Ցեղասպանության փրկվածներից մեկի թոռ Հադի Գյումուշն էլ շեշտել է, որ իր պապի անունը Պետրոս է եղել, ով փրկվել է մի քանի օր ծառի վրա թաքնված մնալով: Հադի Գյումուշը շեշտել է, թե Բունդեսթագի բանաձեւում Գերմանիայի մեղսակցության կետը գոհացուցիչ է: «Ես միշտ էլ իմացել եմ, որ Գերմանիան է եղել Օսմանյան Թուրքիայի հանցակիցը: Այդ որոշումը շատ տեղին էր ու մյուս երկրները պետք է օրինակ վերցնեն», - ասել է Հադի Գյումուշը:

Թուրքիայի մեջլիսի հայ կին պատգամավորը աջակցություն է հայտնել Բունդեսթագի բանաձեւին

14:06, 06.06.2016



Գերմանիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւի ընդունումից հետո խայտառակությամբ է հանդես եկել Թուրքիայի Ժողովրդա-հանրապետական (CHP) կուսակցության հայ կին պատգամավոր Մելինա Դոդանը:

Թուրքական OdaTV կայքի փոխանցմամբ՝ թեև CHP-ն դատապարտել էր Բունդեսթագի ընդունած որոշումը, CHP-ի կին պատգամավոր Մելինա Դոդանը, անդրադառնալով Բունդեսթագի բանաձեւին, ասել է, թե Թուրքիան պետք է հրաժարվի գլուխը ավազի մեջ մտնցնելու քաղաքականությունից:

Նման տիպի կոտորածները մարդկության դեմ հանցանք են: Իմ ընտանիքի երկու կողմից մարդիկ են կոտորվել այդ ժամանակ: Դրան պետք է պարզաբանում տրվի: Այն օրերում միլիոնների հասնող ժողովուրդը ներկայում տասնյակ հազարների հազիվ է հասնում: Մենք այդ հարցով պահանջել ենք, որ Թուրքիայի խորհրդարանում հանձնաժողով կազմվի, սակայն ցավոք, դեռևս համապատասխան հող չի նախապատրաստվել,–նշել է Սելինա Դողանը՝ շեշտելով, որ Բունդեսթագի ընդունված որոշումը տարբերվում է մյուսներից, քանի որ այնտեղ կա նաև Գերմանիայի մեղակցությունը:

Հայ կինը պատգամավորը նշել է, որ 1915–ին հայերի դեմ իրականացվածը նույնիսկ մեծ թվով թուրք պատմաբաններ մարդկության դեմ հանցանքն են որակում:

Սփյուռք

Պոլսո հայոց փոխպատրիարքը 500 հազար դոլարանոց բնակարան է գնել Ստամբուլում
02.06.2016



Պոլսո հայոց պատրիարքական փոխանորդ արք. Արամ Աթեշյանը հաստատել է, որ Ստամբուլում բնակարան է գնել: Ստամբուլի հայկական Ակոսե շաբաթաթերթի հետ զրույցում արք. Արամ Աթեշյանը նշել է, թե ինքը բնակարանը ձեռք է բերել 40 տարվա իր հավաքած աշխատավարձով եւ մեղք է համարել իր հասցեին անհիմն բամբասանքներ տարածելը:

Նշենք, որ Պոլսո հայ համայնքում խոսակցություններ էին շրջանառվում, որ Բողրում հանգստավայրում տուն գնելուց երկու տարի անց՝ վերջին օրերին, արք. Արամ Աթեշյանը 500 հազար դոլարանոց բնակարան է գնել Ստամբուլում:

Հայերի պատմությունը հեռավոր Բանգլադեշում. Նրանք հանրախանութ բերեցին երկիր եւ ոչ միայն

22:15, 12.06.2016

Թուրքիայի կողմից ցեղասպանությունների պատմության ժխտումն անհերթել է: Այս մասին Բանգլադեշի անգլալեզու The Daily Star պարբերականում հրապարակված հոդվածում գրել է ճարտարապետ Ադնան Մորշեդը: Հոդվածում, մասնավորապես, ասվում է.

Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեռի ընդունումից հետո Անկարան Բեռլինից հետ կանչեց իր դեսպանին:



Ծանոթ պատմություն է, այնպես չէ՞: Թուրքիան հետ կանչեց նաև Բանգլադեշում իր դեսպանին՝ ռազմական հանցագործի մահապատից հետո (ծայրահեղական իսլամիստ Մոտիուր Ռահման Նիզամիի - խմբ.): Այս դեպքում Էրդողանն արհամարհական վերաբերմունք ցուցաբերեց 1971 թվականին Բանգլադեշում իրականացված ցեղասպանության հանդեպ:

Չեմ ուզում Թուրքիայի հոգեվերլուծությամբ զբաղվել, երբ խոսքը վերաբերում է ցեղասպանությունների պատմությանը: Բայց հետաքրքիր է, թե ինչպես են հայերի եւ բանգլադեշցիների համար ընդհանուր այդ իրադարձություններն ազդում նրանց ազգային ինքնության վրա: Առավել հետաքրքիր է այն, որ Դաքքայում հայերի պատմության հետքեր կան: Փորձեմ այն ներկայացնել հին Դաքքայի Տաճարների փողոցում գտնվող հայկական Մուրբ Համբարձման եկեղեցու օրինակով:

Եկեղեցին համեստ է, բայց նրա պատմությունը հայերի կյանքի հարուստ խճանկարն է՝ կազմված Արեւելյան Բենգալում նրանց առևտրական, կրթական, քաղաքական գործունեությունից:

Խորթին իրադրությունը հայերին ստիպել է դիմակայել, նաև գործարար եւ միջնորդական ունակություններ ձեռք բերել: Հայերն ուր էլ գնացել են վաճառականությամբ զբաղվելու, ամենուր սովորել են տեղի լեզուն (ի տարբերություն ասիացի եւ եվրոպացի մյուս վաճառականների): Դա նրանց օգնել է շփվել անմիջապես ապրանք արտադրողների հետ:

Հայտնի չէ, թե կոնկրետ երբ են հայերը Դաքքա եկել: Իհարկե, որոշ պատմաբաններ ենթադրում են, որ XVII դարի սկզբին նրանք արդեն ժամանել են Բենգալ, ամենայն հավանականությամբ՝ Պարսկաստանից, որտեղ շահ Աբբասն առևտրային Ջուդա քաղաքից շուրջ 300 հազար հայերի տեղափոխել է Սպահանի արվարձաններ, որը հետագայում հայտնի է դարձել որպես Նոր Ջուդա:

Մոնղոլական կայսրության պալատական պաշտոնական լեզուն պարսկերենն էր: Այդ պատճառով Պարսկաստանից հայերը դուրսագալությամբ հարմարվեցին նոր միջավայրին: Տեքստիլի առևտրով զբաղվելու հմտությամբ հայտնի հայերը բնակություն հաստատեցին Դաքքայում՝ բարձրորակ տեքստիլի առևտրի կենտրոններից մեկում, զգալիորեն զարգացնելով քաղաքի առևտրային կյանքը:

Բացի տեքստիլից եւ մետաքսի հումքից՝ հայերը սկսեցին զբաղվել նաև աղի, ընկույզի առևտրով, իսկ XIX դարի սկզբից Բենգալում թեյ էին տարածում: Երբ XVIII դարի վերջին բրիտանացիներն իրենց ձեռքը վերցրին կոտրեղենի առևտուրը, հայերը սկսեցին ուշադրություն դարձնել հողի առքուվաճառքին՝ դառնալով խոշոր եւ հարուստ հողատերեր: Նրանցից են Ադա Արաթուն Միքայելը, Ադա Սարգիսը, Նիկոլաս Մարգար Պողոսը:

Հայերը Դաքքայի բնակիչներին ծանոթացրին նաև ձիասայլին, որը մինչև XX դարի սկիզբը քաղաքի հիմնական փոխադրամիջոցն էր: Բացի այդ, հայերը քաղաքում արեւմտյան տիպի առաջին հանրախանութը բացեցին:

Հայերի ազդեցությունը միայն առեստրով չի սահմանակվել: 1848 թվականին Նիկոլաս Պոդոսը քաղաքում առաջին մասնավոր դպրոցն է հիմնում: Այն մինչև հիմա համարվում է ամենահեղինակավոր կրթական հաստատությունը Հին քաղաքում:

Դաքքայի հայ համայնքը համեմատաբար մեծ չէ, բայց մեծ ազդեցություն է ունեցել տեղական եւ տարածաշրջանային առեստրի վրա:

Հիմնականում նրանց բնակվել են Հին Դաքքայի Արմանիտոյա թաղամասում՝ կոչված այն գաղութի անունով, որտեղ նրանք ժամանակին ապրել են:

Դաքքայի հայերի մեծ մասը բնակվել է Հին քաղաքի՝ եվրոպական ոճով առանձնատներում: Համայնքի կրոնական կյանքի կենտրոնը Սուրբ Համբարձման տաճարն էր՝ կառուցված 1781 թվականին, նախկին մատուռի եւ գերեզմանի ավերակների վրա:

Եկեղեցու համար տարածք է նվիրաբերել Աղա Մինասը, որի կինը մահացել է 1764 թվականին եւ հուղարկավորվել եկեղեցում:

Դժվար է չկարեկցել հայերին, հատկապես՝ նրանց եւ մեր «մոռացված» ցեղասպանությունների լույսի ներքո:

Չինաստանի Հայկական համայնքը դրամահավաք է կազմակերպել Արցախի համար

01.07.2016



Չինաստանի Հայկական համայնքը Արցախին օժանդակելու համար դրամահավաք է կազմակերպել, որի արդյունքում հավաքված գումարը փոխանցվել է Արցախի կառավարության կողմից հաստատված հաշվեհամարին:

Դրամահավաքն անցկացվել է առցանց եղանակով, որին ակտիվորեն մասնակցել են Չինաստանում սովորող հայ ուսանողներն ու համայնքի անդամները:

Չինաստանի Հայկական համայնքն անկախ կազմակերպություն է, որը վերջին տարիներին ակտիվ գործունեություն է ծավալում: Հատկանշական են երկրում բնակվող հայերին միավորելը, Հեռավոր Արեւելքում հայապահպանությանը նպաստելը, չինացի ուսանողներին Հայաստանում սովորելու համար կրթաթոշակի հատկացումը, Չինաստանում հայկական ներկայության պատմության վերաբերյալ, Գյուլբենկյանե հիմնադրամի հետ կատարվող ուսումնասիրությունները, Չինաստանում Հայկական ուսանողական միության գործունեությունը, Հայ հետազոտողների եւ ուսանողների ամենամյա առցանց գիտաժողովը եւ այլն:

Ժիտոմիրում բացվել է Ուկրաինայում հայկական գրատպության 400-ամյակին նվիրված ցուցահանդես

17:28, 30.06.2016

Ժիտոմիրում Ուկրաինական մշակույթի տանը, Ուկրաինայի հայերի միության միջոցառումների շրջանակում հունիսի 30-ին բացվել է Ուկրաինայի հայկական ժառանգություններ

ցուցահանդեսը, որը նվիրված է Ուկրաինայում հայկական գրատպության 400-ամյակին:



Ուկրաինայի Հայերի միության պատմամշակութային հարցերով կոմիտեի ղեկավար Դավիթ Դավթյանը միջոցառումների մասնակիցներին փոխանցել է Կազմակերպության նախագահ Վիլեն Շատվորյանի խոսքերը, հայտնում է AnalitikaUA.net-ը:

Դավիթ Դավթյանը մանրամասնորեն ներկայացրել է ցուցահանդեսը, որն Ուկրաինայի հայերի բազմադարյա պատմության եւ մշակույթի այնպիսի վկայություններ է ներառում, ինչպիսիք են Լվովի հայկական տպագրատան նյութերը, Սոֆիա Կիւսկայայի գծանկարները, հայկական հրաշագործ սրբապատկերները:

Ցուցահանդեսը կազմակերպել է Ուկրաինայում Հայերի միության պատմամշակութային կոմիտեի, Ժիտոմիրի Էրեբունիե հայ համայնքի եւ Ուկրաինական մշակույթի տան կողեկտիվի ջանքերով:

Բացված ցուցահանդեսն այցելել Ժիտոմիրի հայ, ինչպես նաեւ լեհական, բելառուսական, չեխական, գնչուական համայնքի ներկայացուցիչներ, քաղաքի բնակիչներ:

Ցուցահանդեսը Ուկրաինայի մշակույթի տան այցելուներին ծանոթության համար մատչելի կլինի մինչև հուլիսի 12-ը:

Արդեն հաղորդվել է, որ այս տարի Ուկրաինայում հայկական գրատպության 400 տարին է լրանում: Լվով քաղաքը հայ գրատպության չորրորդ կենտրոնն է դարձել Վենետիկից, Կոստանդնուպոլսից եւ Հռոմից հետո:

Միջազգային

Ջեմալ փաշայի թոռը Էրդողանին հիշեցրել է Թուրքիայի կոտորածները. մի քիչ ազնիվ եղիր, ազնիվ

11:16, 08.06.2016



Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից Ջեմալ փաշայի թոռը՝ Հասան Ջեմալն իր հերթական

հրապարակման մեջ անդրադարձել է վերջին շրջանում նախագահ Էրդողանի զավեշտալի հայտարարություններին ու Հայոց ցեղասպանության անհիմն ժխտումներին:

Թուրքական T24. com-ում տեղադրված հրապարակման մեջ Հասան Ջեմալը Էրդողանին խորհուրդ է տվել մի քիչ ազնիվ լինել, ազնիվ եւ հիշել նախկինում արած հայտարարությունները:

Հասան Ջեմալը, շեշտելով, որ Էրդողանը Բունդեսթագի բանաձեռից հետո հայտարարել է, թե Թուրքիայի պատմությունն ու անցյալը մաքրամաքուր են, հիշեցրել է ավելի վաղ Էրդողանի արած հայտարարությունները:

Իսկ ո՞վ էր 1915-ի հետ կապված ցավակցություն հայտնում հայերին: Իսկ ով էր 2010-ին հայտարարում, թե 1938-ին Դերսիմում 50 հազար անմեղ է կոտորվել: Միթե՞ արանք քո խոսքերը չեն:

Իսկ 1955-ի սեպտեմբերի 6-ի ու-7-ի հայերի ու հույների կոտորածները, Չորումի կոտորածները, Մարաշի կոտորածները, Մադրմաքի կոտորածները, Ռոբոսկիի կոտորածները: Սրա՞նք են մեր մաքրամաքուր պատմության էջերը,-գրել է Հասան Ջեմալը:

Լեզենդար բոնցքամարտիկ Մուհամեդ Ալիի ընտանիքը հրաժարվել է վերցնել Էրդողանի նվերները

00:04, 12.06.2016



Մուհամեդ Ալիի թաղմանը մասնակցելու համար ԱՄՆ մեկնած սակայն առանց թաղմանը մասնակցելու Թուրքիա վերադարձած նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ կապված նոր մանրամասներ են հայտնի դարձել:

Թուրքական Cumhuriyet-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի նախագահը ԱՄՆ-ում ցանկացել է Մուհամեդ Ալիի ընտանիքին հանձնել Թուրքիայից իր հետ բերած նվերները, սակայն այդ նվերները մնացել են Էրդողանի ձեռքում: Էրդողանը նվերները ընտանիքի անդամներից մեկին հանձնելու համար գնացել է լեզենդար բոնցքամարտիկի պատվին ստեղծված թանգարան, սակայն այնտեղ նրան ոչ-որ չի մոտեցել եւ Էրդողանը գլխիկոր հեռացել է:

Նշենք, Թուրքիայի նախագահը ցանկացել էր ելույթ ունենալ Մուհամեդ Ալիի թաղման արարողությանը, սակայն Ալիի ընտանիքը մերժել էր: Էրդողանը ցանկացել է Քաբբայից բերված սուրբ կտորի հատված դնել Ալիի դագաղի վրա, սակայն ընտանիքի անդամները դա էլ են մերժել: Էրդողանը խնդրել էր, որ թաղմանը Թուրքիայի կրոնական գործերի կառավարիչը Ղուրան կարդա, սակայն այս պահանջը եւս մերժվել է, ինչից վիրավորված Էրդողանը առանց թաղմանը մասնակցելու վերադարձել էր Թուրքիա:

Գալիպոլիում եւ Մերձավոր Արեւելքում տեղակայված ավստրալական զորքերը նույնպես ողբերգության վկաները դարձան

12.06.2016



Ավստրալիայի ղեկավարությունը, ամենայն հավանականությամբ, Թուրքիային վերաբերվում է այնպես, ինչպես 1915 թվականի, այլ ոչ այժմյան Գերմանիան: Այս մասին Independent Australia պարբերականում հրապարակված հոդվածում գրել է ավստրալահայ հրապարակախոս, պատմաբան Վիգեն Բաբկենյանը: Օսմանյան կայսրությունում հայերի ոչնչացման ամենաթեժ շրջանում՝ 1915 թվականի հուլիսին, Կոնստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Հանս Ֆոն Վանգենհայմը հաղորդում էր. «Օսմանյան կառավարությունը նպատակ ունի թուրքական կայսրությունից արմատախիլ անել հայկական ռասան»:

Առաջին աշխարհամարտի տարիներին Գերմանիան Թուրքիայի դաշնակիցն էր: Եվ Վանգենհայմի զեկույցը պաշտոնյաների համար էր, այլ ոչ հանրության: Գերմանացի զինվորականները, դիվանագետները, ինժեներներն Օսմանյան կայսրությունում ամենուր էին եւ Գերմանիայի դեսպանություն մշտապես զեկույցներ էին ուղարկում հայերի դեմ օսմանցիների դաժանությունների մասին: Դրանցում համոզիչ եւ անհերքելի տվյալներ կային այն մասին, որ օսմանյան կառավարությունը ռասայական բնաջնջման կանխամտածված քաղաքականություն է սկսել:

Չնայած դրան՝ այն ժամանակվա գերմանական կառավարության պաշտոնական դիրքորոշումն էր՝ խուսափել քննադատել դաշնակցին: 1915 թվականի դեկտեմբերին Գերմանիայի կանցլեր Թեոբալդ Ֆոն Բետմանն-Հոլվեգը հայտարարեց. «Մեր միակ նպատակն է՝ Թուրքիային մեր կողմը պահել մինչև պատերազմի ավարտը՝ անկախ այն հանգամանքից, հայերը կգոհվեն, թե՛ ոչ»:

Տեղափոխվենք 100 տարի անց: 2016 թվականի հունիսին Գերմանիայի խորհրդարանը պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը՝ ընդունելով նաեւ Գերմանական կայսրության մասնակի պատասխանատվությունը:

Գերմանիան սուր կերպով գիտակցում է, որ պատասխանատու է դարի մեծագույն՝ եվրոպական հրեաների ցեղասպանության համար, իսկ դա նշանակում է, որ ժխտումն անթույլատրելի է: Գերմանացի պատգամավորներն ուշադրություն չդարձրեցին Թուրքիայի նախագահ Էրդողանի սպառնալիքներին այն մասին, որ ցեղասպանության ճանաչումը կվնասի երկու երկրների հարբերություններին: Իսկ ի՞նչ կապ ունի Ավստրալիան: Պատասխանը կարող է զարմանալի թվալ, բայց պատմության մեջ նրա դերը նույնպես մեծ է:

Գալիպոլիում եւ Մերձավոր Արեւելքում տեղակայված ավստրալական զորքերը նույնպես ողբերգության վկան դարձան: Այնտեղ հայերն ավստրալացիների հետ որպես թարգմանիչ էին աշխատում: Ավստրալական զերիններին Թուրքիայում տեղակայում էին հայերի կողմից լքված տներում եւ եկեղեցիներում: Երկրի խորքերն արտոլվելիս նրանք տեսնում էին, թե ինչ է կատարվում հայերի հետ:

Պաղեստինում, որտեղ ավստրալացիների թեթեւ հեծելազորը մոտենում էր թուրքական սահմանին, նրանք փրկում էին հայ փախստականներին: Դանստերֆորսի զորամասերը նրանց փրկում էին նաեւ Պարսկաստանի հյուսիսում:

Պատերազմի ժամանակ եւ դրանից հետո ավստրալացիները մասնակցում էին հայերի օգնության միջազգային մարդասիրական լայնածավալ արշավին: Բուժքույրեր, բժիշկներ, հոգեւորականներ էին մեկնում Լիբանան, Խորհրդային Հայաստան, Հունաստան եւ այլ երկրներ՝ նրանց օգնելու:

Ավստրալիան պարենով եւ այլ օգնությամբ նավեր էր ուղարկում Մերձավոր Արեւելք: Դա ֆինանսավորվում էր երկրի կառավարության կողմից: Ավստրալացիները կարողացան նույնիսկ Լիբանանում մանկատուն բացել 1700 երեխայի համար եւ 8 տարի պահել այն:

Ավստրալացի կին ակտիվիստներն աշխատում էին Ազգերի Լիգայում եւ փորձում փրկել կանանց եւ երեխաներին, որոնց վերցրել էին Թուրքիայի մահմեդական ընտանիքները:

Ավստրալիայի դերն այսպանով չսահմանափակվեց: 1960-ականներից հայերը սկսեցին Ավստրալիա ներգաղթել: Նրանցից շատերը Հայոց ցեղասպանությունը վերապրածների երեխաներն ու թոռներն էին: Հիմա նրանք Ավստրալիայում տասնյակ հազարավոր են: Նրանց ընտանիքների պատմությունները ներկայացվել են վերջերս լույս տեսած «Հայաստանը, Ավստրալիան եւ Մեծ պատերազմը» գրքում:

Չնայած հայերի ողբերգության հետ Ավստրալիայի սերտ կապերին՝ երկրի ԱԳ նախարար Ջուլի Բիշոփը 2014 թվականին հինչեցրեց պետության պաշտոնական դիրքորոշումը. այդ իրադարձությունները երկրի ղեկավարությունը .որպես .ցեղասպանությունն չի ճանաչում: Ավստրալիան մեծ նշանակություն է տալիս Թուրքիայի հետ իր հարաբերություններին: Դրանք ամրապնդվել են Գալիպոլիում մեր ընդհանուր պատմությամբ, եւ G20-ի շրջանակում այժմյան համագործակցությամբ,- ընդգծեց նախարարը:

Ըստ էության, Հայոց ցեղասպանության հարցում մեր երկրի դիրքորոշումը հիշեցնում է 1915 թվականի Գերմանիան:

Իսրայելի Կենսետը հուլիսի 5-ին քննարկումներ կանցկացնի Հայոց ցեղասպանության թեմայով

16:37, 29.06.2016

Իսրայելի Կենսետը հուլիսի 5-ին՝ գերմանական Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեռի ընդունումից մեկ ամիս անց, Ցեղասպանության թեմայով քննարկումներ կանցկացնի: Այս մասին [Zoryan Institute](#)-ին տված հարցազրույցում հայտարարել է իսրայելցի պատմաբան Յաիր Աուրոնը:

Նրա խոսքով, Իսրայելը ձեռնպահ է մնացել Հայոց ցեղասպանության հարցով հրապարակային քննարկումներից եւ ազատ քվեարկության անցկացումից՝ վախենալով փչացնել Իսրայելի եւ ԱՄՆ-ի առանցքային

դաշնակից Թուրքիայի կառավարության հետ հարաբերությունները:



Պատմաբանը համաձայն չէ Հոլոքոստի եզակիության մասին կարծիքին: «Ես չեմ կարող դա ընդունել, քանի որ Հոլոքոստը եզակի չէ, եւ անհրաժեշտ է այն ուսումնասիրել որպես ցեղասպանության մեկ օրինակ: Իսրայելը՝ որպես Հոլոքոստի հետեւանքով առաջացած պետություն, չպետք է փոխանակում կատարի այլ մարդկանց ցեղասպանության մասին հիշողության հարցում,- ասել է Աուրոնը:

Ըստ նրա, եթե ամերիկյան նախագահները խուսափում են .ցեղասպանությունն բառից, ապա Իսրայելն ավելի առաջ է գնացել՝ ոչ միայն ժխտելով Հայոց ցեղասպանությունը, այլեւ հարգելով դարաբաղյան հակամարտության ժամանակ Խոջալուում աղյուքեջանցիների փոքր խմբի ողբերգական մահվան հիշատակը:

Պատմաբանը Կենսետին կոչ է արել ազատ քվեարկություն անցկացնել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցով: «Հիմա, երբ Իսրայելն ու Թուրքիան վերականգնում են դիվանագիտական կապերը, Կենսետը պետք է հստակ հաղորդագրություն ուղարկի այն մասին, որ Իսրայելի հետ հարաբերությունները չեն կարող պատանդ դառնալ պատմական անվիճելի փաստերն ընդունելուց հրաժարվելու՝ Թուրքիայի դիրքորոշմանը, հատկապես Գերմանիայի կողմից դրանց մասնակցությունը ճանաչելուց հետո: Հարկավոր է նաեւ ընդգծել, որ Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը չի առնչվում Թուրքիայի հանդեպ բարեկամական կամ թշնամական վերաբերմունքին, դա ավելի շատ Իսրայելի բարոյական պարտականությունն է,- ամփոփել է Յաիր Աուրոնը:

Մշակութային

ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՀՆԶՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Գրական արեւելահայերենն ունի 36 հնչյուն, որոնք արտահայտվում են 39 տառով: Բանն այն է, որ օ հնչյունը գրվում է օ եւ ո տառերով (որինակ՝ օր, նոր), է հնչյունը՝ է եւ ե տառերով (էջ, մեջ), իսկ եւ տառով որոշ դեպքերում արտահայտվում է երեք հնչյունով՝ յէվ (նաեւ - կարդացվում է նայէվ), որոշ դեպքերում՝ երկու հնչյուն՝ էվ (բարեւ - կարդացվում է բարէվ):

Ահա ժամանակակից արեւելահայերենի այբուբենը՝

Ա ա Բ բ Գ գ Դ դ Ե ե Ղ զ Է է Ը ը Թ թ
Ժ ժ Ի ի Լ լ Խ խ Շ շ Կ կ Հ հ Ձ ձ Ղ ղ

Ճ ճ Մ մ Յ յ Ն ն Ծ ծ Ո ո Չ չ Պ պ Ջ Ջ
Ռ ռ Ս ս Վ վ Տ տ Ր ր Յ Յ Ո Ո Փ փ Ք ք
- եւ Օ օ Ֆ ֆ

Այն ձայնավորները, որոնք բացառապես ձայնից են կազմված եւ որոնց արտաբերության ժամանակ բերանի խոռոչում արգելքներ չեն ստեղծվում, կոչվում են ձայնավորներ: Հայերենի ձայնավորներն են՝ ա, է (ե), ը, ի, ու, օ (ո): Արեւելահայերենում եւ երեւմտահայերենում սրանց արտաբերության մեջ տարբերություններ չկան: Մնացած հնչյունները, որոնք կազմված են ձայնից ու աղմուկից եւ որոնց արտաբերության ժամանակ բերանի խոռոչում ստեղծվում են որոշակի արգելքներ, կոչվում են բաղաձայններ: Հայերենի բաղաձայններն են՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ: Ըստ ձայնի եւ աղմուկի հարաբերության, բաղաձայնները լինում են երեք տեսակի՝ ձայնորդ, ձայնեղ եւ խուլ: Ձայնորդ են կոչվում այն բաղաձայնները, որոնք կազմված են ձայնից եւ աղմուկից եւ որոնց մեջ ձայնը գերազանցում է աղմուկին: Հայերենի ձայնորդներն են՝ լ, յ, մ, ն, ր, ռ: Արեւմտահայերենում ր-ը բաղաձայնների տարբերակումը հաճախ հստակ չի լինում եւ ուղղագրական սխալների տեղիք է տալիս, մինչեւդեռ արեւելահայերենում հակադրությունը հստակ է:

Ձայնից եւ աղմուկից կազմված այն բաղաձայնները, որոնց մեջ աղմուկն է գերակշռողը, կոչվում են ձայնեղ բաղաձայններ: Հայերենի ձայնեղներն են՝ բ, գ, դ, ձ, ջ, զ, ժ, դ, վ:

Խուլ են կոչվում միայն աղմուկից կազմված բաղաձայնները: Արեւելահայերենի խուլներն են՝ պ, կ, տ, ծ, ճ, ս, շ, խ, ֆ, հ: Մյանցից պ, կ, տ, ծ, ճ բաղաձայնները հ հնչյունի հետ միանալով՝ կազմում են շնչեղ խուլներ՝ փ (=պ+հ), ք (=կ+հ), թ (=տ+հ), ց (=ս+հ), չ (=ճ+հ): Այսպիսով, արեւելահայերենի բաղաձայնական համակարգը հետեւյալ պատկերն է ներկայացնում՝

ձայնեղ բ գ դ ձ ջ ժ զ վ
խուլ պ կ տ ծ ճ ս խ ֆ հ
շնչեղ խուլ փ ք թ ց չ
ձայնորդ լ մ յ ն ր ռ

Քնի որ գրական արեւմտահայերենում պ, կ, տ, ծ, ճ պարզ խուլերը վերացել են՝ համապատասխանաբար վերածվելով բ, գ, դ, ձ, ջ ձայնեղների (գրում ենք կոթող, կարդում՝ գոթող, պատ՝ բաղ եւ այլն), ապա արեւմտահայերենի բաղաձայնական համակարգը երկշարք է, ի տարբերություն արեւելահայերենի, որը եռաշարք է եւ ավելի հարուստ: Առաջադրանք: Անգիր անել արեւելահայերենի այբուբենը: Կարողություն մշակել՝ բառարաններից օգտվելու: Բառարաններում բառերը դասավորվում են այբբենական կարգով, որպեսզի հեշտությամբ գտնենք անհրաժեշտ բառը: Դա կատարվում է հետեւյալ ձևով. բառերը խմբավորվում են նախ առաջին տառերի հերթականությամբ, ապա՝ մինչև երկրորդ տառով սկսվող բառերը դասակարգվում են երկրորդ տառերի հաջորդականությամբ, այնուհետեւ՝ երրորդ, չորրորդ եւ այսպես շարունակ:

Աբադան (Մաս 2 եւ վերջ)



Միհրդատ Մարտիրոսեան Գլխավոր



Աբադանի թանգարանը

Աբադանի Թանգարանը Ալի Հանիբալը, Նաֆտային ընկերության համագործակցությամբ, օրինակելով Դանիել Մարգարեի հանգստարանի մոդելին, հիմնեց կոնաձև «Մախրուբի» թանգարանը 22.5 մէթր բարձրությամբ, որում տեղադրւեցին յուշակոթողներ Հին Ծուշիից, Մասնավի և Ղաջար դարաշրջանից ներկայացնող կուռքեր, արձաններ և տարբեր գործիքներ:



Աբադանի Ռէքս սինեման աւել քան 80 տարի անցնալով ամենառաջիններիցն էր միջին արևելքում, որ հիմնւել է 1930 թականին: Կինոն 3 հարկի վրայ է 700 հոգի տարողությամբ հիմնւել է երկրորդ պատերազմից յետոյ մի

Հնդիկ Վաճա- ռականի միջոցով: Ռէքս Կինոն 28 Մորդադ 1357 թականին ժամը 21.45 «Եղջերուներ» ժապաւէնի ցուցադրութեան ժամին, հրդէիի ճարակ դարձաւ և 677 հոգի կինոյի մասնակցողներ այրւեցին, ներկաների հետ միասին վառւեց ամեն ինչ և այս աղետը ընկալւեց որ կատարւել է Փահլաւի Իշխանութեան կարգադրութեամբ: Փահլաւի իշխանութիւնը այս դէպքերը փորձեց վերագրել, Մարքիստ Իսլամեաներին, մինչդէռ ժողովուրդը դէպքերը վերագրեցին իշխանութեանը:

Թաջ կինոն 1178 հոգի տարողությամբ, հիմնւել է 1946 թականին: Կարմիր գոյնի աղիւսերը ներմուծւել է Անգլիայից և չորս



Կողմից շրջահայացք է, դիմացից նայես առիւծի է նման վերևից թափի:

Իրանի նափտային կազմակերպության բոլոր շրջանակներում տիրում էր դասակարգային նուստացուցիչ հանգամանք: Աբադանի քաղաքի հիմնադրումը որպես երեք տարբեր անջատ շրջան երբ բնակարանները դասակարգի պաշտօնի և ազգի հիման վրայ էր որը ներկայացնում էր ազգ պաշտօնի հանրություն և տիրապետական նկատառում որի նմաօրինակը մեր համայնքում անընդունելի էր: յատկապես սկզբնական տարիներին երբ Անգլիացի պաշտոնեականներին անխտիր տրուում է ապրուստի ամենայարմար հարմարություններ, բնակարան, հիւանդանոց, ակումբ, երթևեկության հնարաւորությունները և այլն իսկ տեղացի իրանցին գուրկ էր այդ բոլոր հանգամանքներից: Շատ Տարիներ անց հետևաբար, ստիպւած եղան տեղի տալ և որոշ բարձրաստիճան իրանցի աշխատողները էլ մասամբ կարողացան օգտուել նման հնարաւորություններից, իսկ Իրանցի միւս աշխատողները գրկւած էին և դեռ ապրում էին վրանների տակ կամ էլ խփրից պատրաստւած անյարմար տնակներում, գուրկ ապրուստի տարրական հնարաւորություններից:

Ի վերջոյ գործաւորության կողմից բողոքներ և պահանջներ եղան, այնպէս որ որոշեցին հաշի առնել նրանց պահանջներին և նրանց համար էլ տարբեր շարժաններում բնակարաններ պատրաստեցին, Բրէյմ կառավարիչների և առաջին դասի գործողներին, Բավարդա երկրորդ կարգի գործողներին , իսկ երրորդ դասը դեռ ապրում էր վրաններում:

Հանրակառքերն էլ դասակարգային էին, Անգլիացիներ և առաջին դասի իրանցի աշխատող- ներ ունէին շատ յարմարաւետ հանրակառքեր, մի հսկիչ էլ առաջին նստարանին նստած, արգիլելու միւս դասի գործողների մուտքը: Երկրորդ դասն էլ ուներ իրեն պատկանող հանրա- կառքը, իսկ երրորդ դասը քայլելով էր աշխատանքի գնում:

Կամաց կամաց գործաւորությունը որոշեց տէր կանգնել իր իրաւունքներին, գործողւ յայտա- րարեցին, դադարեցրին աշխատանքը, հանրակարգերը մնացին առանց վարորդի: հետևա- բար Պաշտօնեաները մնացին տանը: Ստիպւած եղան գործաւորների ներկայացոյցների հետ ժողովներ գումարել, համաձայնության գալ որպիսի վերահաս լինեն նրանց պահանջ- ներին:

Կնքւեց Գաս-Գոլշայեան պայմանագիր կամ «կցորդ պայմանագիր» որ 1328 «1950» թականին Իրանի կառաւորության և Անգլիայի նափտային ընկերության ներկայացուցիչ միջև ընդունւեց որպէս միացում 1311« 1933» թականի պայմանագրին, որում որոշւեց ճշտումներ կատարի իրանին վճարելիք գումարի վերաբերեալ, որն Անգլիայի կողմից էլ երաշխաւորում էր:

Իրանի նափտային արդիւնաբերության ազգայնացման վաւերացման հաստատումը, դարձաւ Իրանի քաղաքական նաև տնտեսական ժողովրդական պայքարի միջոց և ազգային հարստության ազատումը օտար երկրացիներից:

Ուստի ժողովում ազգայնականները Մոսադէղի հովանաւորութեամբ և աջակցութեամբ քննարկելով Գաս Գոլշայեան պայմանագիրը 26 Էսֆանդ 1329 ին այդ պայմանը չեղեալ համարեցին, և Քարիւղի Ազգայնացման նոր օրէնք 9-ը

յողւածով պարլամենդում վաւերացրին: Էսֆանդ 29ին Սէնաում այդ օրէնքը արժանացաւ արքայի ստորագրութեան և այդ օրը յատարարւեց քարիւղի ազգայնացման օր, որը համընկնում էր նովրուզի նախօրեակին:

Ֆարւարդին 8 1330 «1931» Անգլիայի կառաւորությունը յայտարարեց թէ իրենց երկրի արդիւնաբերական հիմնարկները գործադուլ եղած շրջանակում ապահուելու նպատակով ֆլամանքու և Այլօգուս ռազմանավերը ուղարկւեն Աբադան: այս երկու նաւերը Պարսից ծոցում ներկայացնում են Անգլիայի իշխանութեան ծովային զորքերի հիմնարկի մի մասը: Այս ժամանակահատւածում Անգլիայի Հիւպատոս Սիբիլըրը Թէիրանում պաշտոնապէս Հոսէյն Ալահից հետաքրքւեց թէ Խուզէստանի Անգլիացիների ապահովութեան առթիւ ինչ է կարգադուրէ: Ֆարւարդին ինին Անգիայի զինուորական իշխանութեան զօրքերը Աբադանի մարդկանց վրայ կրակ բացեցին, որի հետևանքով երեք հոգի վնասւեցին: Ժամանակաւոր դրութիւնը խաղաղւեց բայց 23 ֆաւարդինին Բանդար Մաշուրի Նաև Աբադանի գործաւոր- ները յեղաշջում կատարեցին որի հետևանքով քանի անմեղ գործաւորներ վիրաւորեցին:

Գանդին մի խօսք ունի որ ոսկեայ տառերով պիտի գրւի «Ես 30 տարի իմ կամքին հակառակ, անձիս հետ պայքարել եմ որ հնարաւոր լինի Անգլիացիների հետ յարաբերութիւնս գիտական, գիտակցական և պարզ արդար հունով ընդանայ»:

Մոսադէղն , անգիական քկերութեան ընկալում էր որպէս լրտես կազմակերպութիւն բայց հետևելով Գանդիի օրինակին այնպէս որ ասաց, մենք ոչ անգլիաի կառավարութեան ոչ էլ Անգլիայի ժողովրդի դէմ ենք, այլ միայն և միայն մեր ընկերութեան յաջողութեան հետ գործ ունենք:



Մոսադէղի հանդիպւմը Անգլիայի դատարանը : Աբադանի համայնքին:



Ասում են երբ որոշում էր Լաիեի դատարանը վերահաս լինի Անգլիա- Իրան քաղաքի ազգայնացման պայմանագրին, դրժ. Մոսադեղը իրեն հետ մասնակցող կազմի հետ աւելի կանուխ ներկայանալով դատարան, գնում նստում են Անգլիայի ներկայացուցչին որոշում նստարանին: Նախքան ժողովի սկսելը, Դորադորին յայտնում են, որ այդ տեղը Անգլիայի խորհուրդի կազմի տեղն է և ձեր տեղը այդտեղ չէ, բայց ծերուկը ուշադրություն չդարձնելով անշարժ մնում է տեղում նստած: Անգլիայի դատախազը Մոսադեղի դիմաց կանգնելով սպասում էր որ Մոսադեղը վեր կենայ, բայց ծերուկը գլուխը կախ նրան ուշադրություն չի դարձնում: Ժողովն սկսում է և կազմակերպիչ դատաւորը դիմում է Մոսադեղին, թէ դուք Անգլիայի ներկայացուցչի տեղն եք գրաւել, կամաց կամաց խնդիր բարդանում էր: Վերջսապէս Դորադորը խօսքի է գալիս, թէ կարծում էր չգիտեմ որտեղ է իմ տեղը և որտեղ Անգլիայի, ոչ շատ լաւ էլ գիտեմ: Բայց մի քանի ժողովի ընկերներին տեղը գրաւեցի որ ներկաները հասկանան ուրիշի տեղ գրաւելը ինչ է նշանակում: Տարիներ է որ Անգլիայի կառավարիչներ մեր երկրում վրան է խփել և կամաց կամաց մոռանում են որ իրենց տեղը այդտեղ չէ: Պարսկաստանը մեր պապենական երկիրն է ոչ թէ ձերը, և հանդարտ վեր կենալով գնում և իր որոշում տեղը նստում: Այս հնարքը և արտակարգ պահանջներ էր որ մինչև վերջ ժողովի մթնոլորտը ուղակի իրեն ազդեցութեան ներքոյ ընթացաւ և վերջնականապէս յաղթական եղաւ:

Բայց իրականութիւնը տարբեր պատմութիւն էԴքտ.Մաիդ Ֆաթեմին Դոկտոր Մոսադեղի բանախօսը, այդ դէպքի մասին երբեք չի անդրադարձել:

Հրատարակած պատկերներում էլ երբեք նման դէպք չի արձանագրւել:



Անգլիայի գործաւորների հեծանալը :

Մոսադեղի յուշերում էլ նման խնդիր չի յիշատակւել: Մոսադեղը իւրապատուկ անձնաւորութիւն էր, իր ամբողջ կեանքի ընթացքին սուտ չէր խօսել, միշտ ընթանում էր ճշմարտութեան

ուղիով, դա էր քաղաքական գրաւականն էր, ընկերների հետ ընկեր էր, թշնամիների հետ ազգային անշխնդրութեամբ էր մօտենում, խեղճերին պաշտպան էր, աշխատանքը ղեկաւարում էր անկեղծութեամբ: Իրան և Իսլամ կեանքի երկու կարեւորներ հեռակետերն էին և մինչև կեանքի վերջ դրանք եղան հեռակետը և այդպէս էլ շարունակւեց մինչ վերջ:

Համաձայն 2006 ի փաստում է է որ Աբադանի Չտարանը աշխարհում ամենամեծն է : Կառուարիչների 9 տոկոսն միայն Խուզիստանից էին:

Չտարանը լրիւ աւերւել էր Սեպ, 1980 ին Իրան Իրաքի պատերազմի հետնանքով երբ զտարանի արտադրանքը օրական 635,000 բարել էր:

Սեպտեմբեր 1980 թւականին ,Երբ 250 հայ ընտանիք դեռ խաղաղ ապրում էին Աբադանում Իրաքի առաջնորդ Սադամ Հուսէյնը յարձակւում է իրանի Իսլամական հանրապետութեան վրայ և Իրաքի բանակը ներխուժում է Խուզիստան, լրիւ աւերում զտարանը իսկ ինքնաթիռ- ները սկսում են ռմբակոծել Թեհրանը:

Սադամ Հուսէյնը յոյս ունէր պատերազմի արդիւնքում, Իրաքին միացնել Շաբ էլ Արաբին կից Իրանի Աբադան և Խորամշահի նավահանգիստները, որոնք վաղուց Երկու երկրների միջև վէճի առարկայ էին, նաև յաղթանակի դէպքում ապահովել Իրաքի գերիշխանութիւնը Պարսից ծոցի նափթի վրայ:

1981 թ.Իրաքեան զորքերը ներթափանցում են Իրանի տարածքը, սակայն Իրանեան բանակին հաջողւում է կասեցնել հակառակորդի առաջխաղացումը, դուրս մղելով նրանց երկրի սահմաններից, և 1982 թ. արդէն պատերազմական գործողութիւններն ընթանում են Իրաքի հանրապետութեան տարածքում: 1982 թ.յուլիսի 13-14-ին Իրանական զորքը մտնում է Բասրա, սակայն Իրաքեան զորքը հակադարձակման է անցնում և իրանական զինւած ուժերը կորցնելով իրենց դիրքերը հետ են նահանջում:

1983 թ. ընթացքում Իրանը մի քանի հարձակումներ է կատարում Իրաքեան բնակավայրերի վրայ: 1984 թ. Իրանեան հրամանատարութեան հաջողւում է 10-15 քմ.խորանալ Իրաք և գրաւել Մաջնուն կղզին: Յունւար 1986 թ.ին Իրանական զորքերը գրաւում են Շաբ էլ Արաբ գետի ափին Փար նաւահանգիստը, որով Իրանի ցամաքային սահմանը բացւում է Բովլեյի հետ: Հետագայում Իրանցիներին յաջողւում է վերագրաւել քաղաքը և նորից ներխուժել Իրաքեան սահմանը:

Ստանալով Ֆրանսիայից և Սովետական միութիւնից զինամթերք Իրաքի զինւած ուժերին յաջողւում է կանգնացնել հակառակորդի առաջխաղացումը և 1988 թ. Օգոստոսին Մակի միջնորդութեամբ ստորագրւում է զինադադար:

Աբադանի բնակչութիւնը տարբեր ժամանակաշրջանում :-
1910 թւականին 400 հոգի.

1956	„	220,000
1980	„	300,000
1986	„	6
1991	„	206,073
2001	„	217,980

Քաղաքի բնակչութեան թիւը անկում արձանագրեց Իրան Իրաք պատերազմի ընթացքում, բնակչութեան թիւը համարեա իջում արձանագրեց (1980-1988): 1986 թւականին Աբադանում միայն 6 հոգի էր ապրում:

1991 թւականին 84,744 հոգի վերադարձել և ապրում էին քաղաքում: 2006 ին աճում արձանագրեց մինչ 217,988 հոգի 48,061 ընտանիք:

Գրածքս գրելու համար օգտւել եմ համակարգչում, Աբադանի մասին, հայերէն , պարսկերէն և անգլերով գրւած տեղեկութիւններից նաև իմ անձնական յուշերից:

Որևէ ճշտում ձեր կողմից գնահատելի է:

Շատ շուտով ձեզ եմ Նեկայացնելու նաև Աբադանի հայոց դպրոցի և հայ համայնքի մասին պատկերազարդ մի հակիռն գրութիւն:

چکیده کتاب تاریخ آرتساخ (قره باغ)

(۳)

نکارش: دکتر ادیک باغدادساریان

رویدادهای آرتساخ (قراباغ) در سالهای ۱۹۲۳-۱۹۱۷

مساواتی‌ها به هر نحو سعی می‌کردند به کمک تامسون آندرانیک را از سیونیک بیرون برانند و آرتساخ ارمنی و سراسر زانگور را به چنگ آورند. آندرانیک درخواست فرماندهی انگلیس مبنی بر تسلیم زانگور به حکومت مساوات را قاطعانه رد کرد. سرگرد کیپون و سروان سیرایت نمایندگان تامسون، عبدالله بیگ حسن بیگ از طرف دولت مساوات باکو و چیلینگاریان نماینده شورای ملی ارمنی باکو پس از ورود به گوریس با آندرانیک به توافق رسیدند که شخص اخیر تا ماه مه ۱۹۱۹ در زانگور باقی بماند. لیکن جلسه فرماندهان نظامی که بنا به دعوت آندرانیک در ۲۳ دسامبر ۱۹۱۸ تشکیل شده بود ترجیح داد زودتر از موعد از سیونیک خارج شوند زیرا نه مواد غذایی موجود بود و نه محل مناسب برای اقامت زمستانی در اختیار داشتند. غیر از آن، سربازان مایل بودند به خانه‌های خود باز گردند و کارهای کشاورزی خود را به موقع انجام دهند. در تاریخ ۴ مارس ۱۹۱۹، سرگرد کیپون بار دیگر به گوریس می‌رود و به آندرانیک پیشنهاد می‌کند از طریق محور شوشی-یولاغ-تفلیس از زانگور راهی ایروان شود و اطمینان می‌داد که جاده‌ها دارای امنیت کافی بوده از طرفی ۲۵۰ سرباز انگلیسی سپاه او را همراهی کنند. از دیگر سو ساکنان قراباغ درخواست کردند تا آندرانیک زانگور را ترک نکند و در صورتی که این امر امکان پذیر نیست و تصمیم ژنرال قطعی است، از محور پیشنهادی انگلیسیان حرکت نکند. آنها اطلاع داشتند که دولت مساواتی‌ها در تدارک کشتار جدیدی در شامخور بود تا بتواند نیروهای ژنرال را کلا نابود سازد. آندرانیک نیز پیشنهاد آنان را رد کرد. سپاه او روز دوم آوریل از روستائیان افتخار آفرین آنگاکوت خداحافظی کرده راهی اجمیادزین گردید. در واقع هم زانگور و هم آرتساخ بدون آندرانیک یتیم شدند.^۱

عزیمت آندرانیک از سیونیک، آرتساخ را در وضعیت وخیمی قرار داد اما اهالی آرتساخ امید خود را از دست نمی‌دادند و مقاومت جسورانه خود را به نام آزادی و تنازع بقاء خود در برابر اشغالگران انگلیسی-مساوات ادامه می‌دادند.


آذربایجان مساواتی و کارگزار آن سلطائف از سیاست خود مبنی بر اشغال آرتساخ صرف نظر نمی‌کردند. سلطائف با حمایت و کمکهای مستقیم دژخیمان ترک و امپریالیستهای انگلیسی در تدارک "حمام خون" در سرزمین آرتساخ بود. واهان اسقف قراباغ و بهادریان عضو شورای ملی ارمنی در این باره تامسون را آگاه می‌سازند و بنا به درخواست تامسون در تاریخ ۲۶ مارس هیئتی از آرتساخ راهی باکو می‌شود و با سرهنگ شاتلورث ملاقات می‌کند. بد نیست به یادداشت‌های مذاکرات بین آسلان شاهنازاریان رئیس شورای ملی آرتساخ و گراسیم ملیک شاهنازاریان شهردار شوشی با شاتلورث بپردازیم. رئیس شورای ملی در پاسخ به این پرسش سرهنگ انگلیسی که قصد ارمنیان قراباغ چیست صریحا "چنین اظهار می‌دارد: "قصد و مقصد نهایی ارمنستان است زیرا که وجوه مشترک کامل وجود دارد". گراسیم شاهنازاریان شهردار در برابر اصرار شاتلورث مبنی بر تبعیت از آذربایجان پاسخ می‌دهد که دولت آذربایجان حتی قادر نیست نظم را در خانه خود برقرار کند چه رسد به برقراری نظم در قراباغ. سرهنگ سعی می‌کند از موضع قدرت سخن بگوید: "مقاومت و ضديت با آذربایجان و استاندارد کل آن ضديت با انگلیس است. ما آتقدر نیرومندیم که می‌توانیم شما را مجبور به اطاعت کنیم". شهردار قاطعانه پاسخ می‌دهد که دروازه‌های قراباغ به روی آذربایجان بسته خواهند بود و حکومت مزبور هرگز پذیرفته نمی‌شود.^۲

پس از مدتی در نیمه دوم آوریل، شاتلورث وارد آرتساخ می‌شود و از شورای ملی ارمنی درخواست می‌کند با حضور او مسئله پذیرش سلطه آذربایجان مساواتی حل و فصل گردد. کنگره جدید پنجم ارمنیان قراباغ در روزهای ۲۹-۲۳ ماه آوریل بطور اضطراری تشکیل می‌گردد. شاتلورث و سلطائف در یکی از جلسات شرکت می‌کنند و شاتلورث چه در سخنرانی خود در جلسه مذکور و چه در نامه‌ای که به تامسون می‌نویسد تلاش می‌کند نقطه نظرات استعماری انگلیس را مطرح سازد. به هر حال، نمایندگان ارمنی آرتساخ به این امر تشویق نمی‌شوند. نمایندگان طی سخنرانی‌های غضبناک خود تاکید می‌کنند که آرتساخ با موقعیت جغرافیایی خود از نقطه نظر قومی و ملی بطور تاریخی بخش جدایی ناپذیر ارمنستان است و نمی‌توان درباره تابعیت از آذربایجان سخن گفت. کنگره "پذیرش هرگونه ارتباط اداری و حکومتی با آذربایجان را غیر ممکن می‌داند". کنگره برای بار دوم به درخواست شاتلورث پاسخ منفی می‌دهد و به نظر خود مبنی بر عدم خیانت به "اراده تزلزل ناپذیر ارمنیان سراسر قراباغ" اصرار می‌ورزد. در قطعنامه‌ای که به امضاء ۴۸ تن از نمایندگان کنگره رسیده بود آمده است که درخواست مطرح شده با "خواست‌ها و منافع حیاتی مردم ارمنی قراباغ که نمایندگان خود را به کنگره گسیل داشته‌اند مطابقت ندارد".

